

# ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԻԿՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

## ՆՈՐԷՆ ԾՆԻՆՔ

Լոնտոնի Հայ զաղթականութիւնը պղտիկ այլ շահեկան հաստատութիւն մը ունի, որ Հայ Գործաւորներու և Ուսանողներու Միութիւն յատկանշանական անունը կը կրէ: Ընթերցարան մըն է ասիկա, ուր գրեթէ ամէն շաբաթ իրիկուն բանախօսութիւն մը տեղի կ'ունենայ ազգային, ընկերական եւ ուսումնական զանազան հարցերու վրայ, եւ ուր անոնք որոնք անթիւր եւ միջոցը ունեցած են մտաւորական մթերք մը ամբարեղու՝ կաշխատին ատկից բաժին մը հանելու անոնց որ կեանքին նիւթական այլամերժ հողերուն մէջ միշտ պատեհութիւն մը չեն գտած կամ չեն գտներ յազգեցնելու իրենց պէտքը մտաւորական վայելումներու:

Վերջին բանախօսներէն մին էր Բրոֆ. Թումայեան, ճշմարտապէս հայրենասէր Հայ մը ու ազնուօգի մարդ մը, որ տարիներով հայրենի հողին վրայ Հայ սերունդներ կրթելէ, ազգային վերածնութեան քաղաքական շարժումին սատարելէ ու յետոյ Եւրոպայի մէջ հայկական դատին համար խօսքով ու գրչով անդու աշխատելէ յետոյ, հիմակ իր բոլոր կորուլը եւ գործունէութիւնը նուիրած է՝ լոխի Ֆլիկ՝ Հայ որբանոցի մը զօր հիմնած է Չիկուէլ (Էսէքս, Անգլիա) եւ զոր ահա երեք տարի է կը վարէ յաջողութեամբ, ամէն դժուարութեանց դէմ յաղթական մարտաւարով:

Բրոֆ. Թումայեանի բանախօսութիւնը կրնամ ամփոփել երկու խօսքով. — Մեր ցեղը ահաւոր ցնցում մը կրեց այս վերջին տարիներս: Չարհուրելի փոթորիկ մը տակնուվրայ ըրաւ ու տարտղնեց մեզ: Երբ քիչ մը ինքզինքնիս գտանք, անոնք որ զիտելու եւ խորհելու տուրքը ունէին՝ ապշուցեցինք եւ ցաւով հաստատեցին թէ մեր ցեղը շատ տգեղ բարքերով ախտաւորուած էր: Ասիկա իրողութիւն մըն է, զոր վարագուրել փորձելով՝ բան մը պիտի չշահէինք: Ընդհակառակը, մեր բոլոր ուժովը աշխատինք վերանորոգուելու, և, Յիսուսի մեծ ու խորհրդանշանական պատուէրին համաձայն, ևսրէ՛ն ծնիւնք:

Բրոֆ. Թումայեան կրնար ըսել նոյնպէս թէ ինք այն-

քան համոզուած է մեր ցեղին հիմնական յեղափոխութեան — բառին զիտական իմաստով — պէտքին, որ գործունէութեան ուրիշ ամէն կերպ մէկզի զրած, իբր Հայ իր ցեղին օգտակար ըլլալու պարտականութիւնը կեղրոնացուցած է մատղաշ հոգիներ իբր մարդ կրթելու եւ պատրաստելու գործին վրայ: Բրոֆէսորը պէտք է որ որ մը հրապարակաւ յայտնէ — եւ, մեր ցեղին բարիքին համար, ասիկա կը սպասեմ իր հայրենասիրութենէն ու անկեղծութենէն — թէ հոգեբանական ներքին ի՛նչ աշխատութիւն, փորձառութեան ի՛նչ հանդուարաններ զինքը հետզհետէ մղեցին ընդգրկելու այն համոզումը որուն հասած է այժմ և որուն գործադրութեանը կ'աշխատի այսօր՝ շատ բաներու խորը գացած ու ետ դարձած իմաստասերի մեծ տրամութեամբ մը:

\* \* \*

Ինծի կը թուի թէ, արդարեւ, պէտք եղածին չափ չենք խորհիր կոր — ու չենք ալ աշխատիր կոր — մեր ցեղին հիմնական վերանորոգմանը, ևսրքիս վերանորոգմանը: Ի՛նչ հարկ կայ ինքզինքնիս պատրելու այն ըմբռնումով թէ մենք ամէն ազնիւ ու ամուր յատկութիւններով օժտուած ցեղ մըն ենք, և թէ ազատութեան միայն կը կարօտինք՝ լիովին իրականացնելու համար քաղաքակրթութեան բոլոր բարիքները որոնց տուրքն ու բաշտանքը ունինք մեր մէջ, ու մարդկութեան մէջ բանելու համար բարոյապէս հրահանգուած առողջ ու կարգաւոր կազմակերպութեանց սահմանուած տեղը:

Իրա՛ւ է որ զէպի յառաջիմութիւն մեր ամէն քայլերուն մէջ թիւրքին պանդոյր խոչընդոտը կամ փշրոշ հարուածը գտած ենք, իրա՛ւ է որ զէպի աւելի ազնիւ, աւելի մաքուր, աւելի քաղաքակիրթ ընկերական կեանքի մը մեր ամէն ջանքերուն դիմաց՝ բարբարոս տիրոջ մը տըխմար կամ վայրագ ընդդիմութեանը հանդիպած ենք:

Մտքովս ետ կ'երթամ մէկ քանի տարի, ու աչքիս առջև կը բերեմ հանրային գործունէութեան ամէն գաշտերը ուր թիւրք կառավարութիւնը մեզի բոլորովին ազատ թողուցած է մեր ըմբռնած լաւագոյն եղանակով վարելու հաստատութիւնները որոնք հանրային օգտին նուիրուած են:

Կ. Պսիս Հայերը Հիւանդանոց մը ունին — որ !

եօթը տարի առաջ կրնար՝ աւելի իրաւամբ՝ սպանդա- նոց կոչուիլ անշուշտ: Ամբողջ Պոլիս գիտէր ասիկա, պատրիարք, վարչութիւն, մամուլ ու հանրային կարծիք համաձայն կին այս մասին. և սակայն ոչ մէկուն մտքէն կ'անցնէր ամենադոյզն բարեփոխութիւն մը մտցնելու այդ հաստատութեան մէջ որ, չըլլալիք հեգնութեամբ մը, Ազգին Տունը կը կոչուէր, — իբր թէ մեզի համար ազ- գային հաւաքականութեան դադափարը՝ հիւանդներու, յիւժարներու, անկարներու և զառաձիներու ընկերակցու- թեան մը վրայ հիմնուած ըլլար: Օր մը պայքարը ըս- կասա՛ այդ ապականութեան, նեխութեան ու զեղծումի որջը մաքրելու համար: Հայրենիք այդ պայքարը մը- զեց հինգ տարի անվհատ, ու պատրիարք, վարչութիւն, մամուլ ու հանրային կարծիք միացան ո՛չ թէ այդ Աւ- դիասի ախոռը մաքրելու, հապա իրաց վիճակը իր նու- նութեամբը պահելու հոն: Պատրիարքարանը Դրան զի- մեց Հայրենիքը լռեցնել տալու համար, ու մամուլը ծափահարեց որչափ ատեն որ Հիւանդանոցին վարիչները կարող եղան՝ իրենց խնամքին յանձնուած խեղճներուն ար- հան դնուիլ՝ դէմ դնել ամէն յարձակումներու, եւ շա- րունակել իրենց զահիճի դորժը յարաճուն փոյթեան- դութեամբ մը:

Անկից ի վեր փոփոխութիւն մը եղած չէ Հիւանդա- նոցին մէջ, ու լրագիրները վերջերս հրատարակեցին նոր մանրամասնութիւններ հոն տիրող զեղծումներու մասին, ա՛յնքան քստմեղի ու սրտաճմլիկ, որ ուրիշ և և է հասա- րակութեան մէջ զայոյթ մը ու ընդվզում մը առաջ պիտի բերէին այնքան ահեղ որ պիտի ալէր տանէր այդ ոճիր- ներուն պատասխանատու բոլոր մարդիկը, մեծով պղտի- կով: Եւ սակայն Պոլիս անբանացած համակերպութեամբ մը լսեց այդ ամէնը, առանց տեղէն երերալու, ու լռու- թիւնը, ոճիրները պարտիող մեղսակից ու վատ լուծիւնը նորէն իջած է այդ յարկին վրայ, խղզելով հոն տառա- պող ցաւազարներուն անձկութեան ու չարչարանքի հեծե- ծանքները:

Էրզրումի մէջ Սանասարեան վարժարան մը կայ, որ սահմանուած է քաղաքակրթութեան ու լուսաւորու- թեան վառարան մը ըլլալու հայրենի երկրին սրտին վրայ իսկ: Հաստատութիւնը, հիմնադրին առատաձեռ- նութեամբը նիւթական հողերէ ազատ, արդարեւ կրնար զերագոյն դեր մը կատարել հայրենի հողին վրայ՝ տե- դին պահանջներուն ամէնէն աւելի յարմար զարգացման մը բարիքները շաղկերով հետզհետէ հասնող սերունդ- ներուն: Եւ սակայն, Սանասարեան վարժարանը, որ ա- հա քսան տարի է հիմնուած է, մեր կրթական միակ բարձ- րագոյն հաստատութիւնն է որուն ոչ մէկ հետքը կը զրտ- նենք մեր հանրային զարգացման գործին մէջ: Ազգա- յին թէ օտար նմանօրինակ հիմնարկութիւնները տարուէ տարի իրենց բաժինը կը բերեն մեր յառաջդիմութեան ճամբուն մէջ, որ ի զուր պիտի փնտռէք Սանասար- եան վարժարանին ալ մասնակցութիւնը: Երջանները շրջաններու կը յաջորդեն, ու զեռ մենք կը սպասենք

խոստացուած բարիքներուն որոնք պիտի բղխէին այդ վարժարանէն: Պատճառը՝ ոչ մէկուն համար գաղանիք մըն է: Անոնք որ այդ վարժարանին տնօրէն մարմինը կը կազմեն, յաճախ նկարագրուած են մեզի իբր մարդիկ ու- ռոնք ուրիշ հոգ չունին բայց եթէ մտմտուքը մուկին որ հոլանտական պանիրին մէջ կ'ընկած՝ անդորր վա- յելման օրեր կ'անցընէ, միակ բաղձանք մը ունենալով, — մտոցուիլ ուրիշներէն: Սերունդները որ կ'անցնին ի- ռենց ձեռքէն, նոյն մտահոգութիւնը ունենալ կը թուին կեանքի մէջ. ու յաջողած են ալ իրենց փափաքին մէջ, որովհետեւ ահա մոռցած ենք զանոնք, ո և է աչքի զար- նույ դրբի մը մէջ տեսած չըլլալով բնաւ դիրենք: — Քննադատութիւնները որոնք անկախ մամուլին մէջ բարձ- րացած են այդ ճգնող ու անէպնող հաստատութեան դէմ, ո և է արդիւնք ունեցած չեն ցարդ, թէև, կը կրկ- նեմ, մարդ չկայ որ չզիտնայ թէ Սանասարեան վար- ժարանը, որ նոր սերունդներուն զարգացմանը նուիր- ուած է, ուրիշ բան ըրած չունի մինչև հիմա բայց եթէ իրեն յանձնուած հողիները խամրել ու ընկալմացնել:

Իզմիրեանց զրական մրցանակին յանձնաժողովը ու- ըրի հաստատութիւն մըն է որուն վարչութիւնը բոլորովին մեզի թողուած է: Եւ կարելի չէ ըսել թէ ատիկա ա- ռաւելութիւն մը եղած է: Այդ յանձնաժողովին անդամ- ներն են մարդիկ որոնք ամէն բանէ կրնան հասկնալ բացի լանասիրութենէ, և այն եղանակը որով տարուէ տարի կը բաշխեն իրենց տրամադրութեան տակ դրուած գու- մարը, պարզապէս զայթակղեցուցիչ է, ու արհամար- հանքի ճառթ մը բոլոր բողբոջի ձայներուն որոնք էն ան- կողմնակալ անձերէ կը բարձրանան տարիներէ ի վեր:

Կրնայի այս ցանկը երկարել՝ մեր ազգայնի բոլոր հաստատութեանց շրջանը ընելով, բայց այս տուր տու- դանցութիւնը վերջացնելով Պատրիարքարանէն առնուած օրինակով մը: Երեք կարեւոր պաշտօններ, գործակա- տարի, կրթական տեսչի եւ ելմտական տեսչի պաշտօն- ները, ասկից առաջ կը գտնուէին ամէնէն ապիկար ան- ձերուն ձեռքը որոնք երբեք ազարտած ըլլան ո և է վար- չութեան մը անունը: Երբեք կարելի չեղաւ այդ մարդիկը իրենց տեղէն խախտել, ու մինչև այսօր կը շարունակեն անշուշտ Պատրիարքարանին սնտուկէն գողնալ — ուրիշ բառ չեմ գտներ — ամսական մը որուն իրաւունք չունին: Անոնցմէ մին միայն, գործակատարը, կարելի եղեր է վերջերս հանդսաի զրկել՝ փոխարէն երկար տարիներու յոգնութեանց զորոնք ունեցած չէր, եւ աս ալ շնորհիւ սա հանգամանքին թէ Օրմանեան պատրիարքը մօտիկ աղջական մը ունէր կարօտ վիճակի մէջ եւ պաշտօնը ա- նոր յանձնուեցաւ Փոփոխութիւնը դէպի յսոին եղած է, որովհետեւ, ինչպէս կ'երեայ, Պատրիարքարանի նոր գոր- ծակատարը կազմակերպեալ աւազակութեան զրոութիւն մը սկսած է, իր պետին ու վարչութեան թոյլատու կամ ան- տարբեր ծանօթութեամբը:

\* \* \*

Երբ այս ամէնուն վրայ լրջօրէն խորհինք, առանց ազգային ինքնախարութեան, առանց սուտ յանձնապատանութեան, պիտի տեսնենք արդարեւ թէ, բարենորոգումներ ուրիշներէ պահանջած ատեննիս, պէտք է նաեւ մենք զմեզ ալ բարենորոգենք:

Յաճախ կ'ապշինք տեսնելով թէ թիւրք կառավարութիւնը չ'ուզեր ի գործ դնել ամենազոյն փոփոխութիւն մը իր վատթար վարչութեան մէջ, — օրինակի համար աննշան գայմագամի մը պաշտօնանկութիւնը: Եսակայն, երբ մեր ներքին վարչութիւնը քննելու ելինք, կը տեսնենք թէ Հիւանդանոցի տնօրէն մը, որ իրեն յանձնուած խեղճերուն զահիճն է ամէնուն զիտութեամբը, իր տեղէն հանելու համար տարիներով մաքառել հարկ եղած է, ունայն ճիգերով:

Կրնայի այստեղ, մեր հանրային կեանքը վարելու առիական եղանակին մասին խօսելէ յետոյ, անցնիլ նաեւ այն բարեբուն ու նկարագրին զոր երեւան բերինք թիւրքիայէն զուրս, քաղաքակիրթ աշխարհին առջեւ: Բայց ատիկա ուրիշ ուսումնասիրութեան մը — նոյնքան կսկծելի — նիւթ կրնայ հայթայթել, ու կը ձգեմ ուրիշ առթի մը:

Երբեք չեմ տարակուսիր մեր ցեղին ընդունակութեանը այն բարձր ու ազնիւ ձիրքերուն որոնք քաղաքակիրթ ընկերութիւնները կը շինեն ու կ'ամրապնդեն: Ու թիւրքին վրայ մեր առաւելութիւնը ան է աներկբայ որ անոր համար զեղծումը ու քաղաքական — հանրային անբարոյականութիւնը բնական անհրաժեշտ երևոյթներ են, մինչ մեզի համար՝ մարմինն վրայ բուսած ախտաւոր ելուններ զորոնք ուշ կամ կանուխ պէտք է կարել նետեանողօք ձեռքով մը:

Բայց ա'լ չուշանանք պատրաստելու այն սերտօնը որ իրմէ առաջիններուն մեղկ ու վատ անտարբերութիւնը պիտի չունենայ բոլոր այն խոչընդոտներուն համար որոնք մեր զարգացման գործին առջեւ պահանէի պէս կեցած են: Յեղաշրջում մը պէտք է մեր բարեբուն մէջ: Բարենորոգումներ պահանջելու ատեն, զիտանք արժանի բլլալ անոնց: Ասոր համար մեր ցեղային արիւնը արդէն մեզ օժտած է քաղաքակիրթութեան ծարսելով մը որ մեր ցեղին բարձրացման էն հօգուտոյն սատարն է: Ինչ որ մեզի կը պահի, այդ բնազդական ձգտումը կազմակերպեալ ոյժ մը ընելն է, կանոնաւոր ու կարգապահ, որ զիտնայ ամուր կերպով յառաջանալ զէպի լուսաստրութիւնը: Քաղաքակիրթութեան տարրերը ունինք մենք. կը մնայ գանձնաբար կազմաւորել և ուղղել զէպի բարձրագոյն նպատակները որոնք մեր աչքին առջեւ են, հեռուն, հորիզոնին վրայ:

Նոր մարդիկ բլլանք, ու նորէն ծնինք: Ահա՛ Հայութեան արդի մեծագոյն, կենսական պէտքը:

Լ. ՉԱՐԹՈՒՄԵԱՆ

ՎՐԷԺԸ

(Շարունակութիւն)

Կ'ուզէր քնանալ, մտնալ ամէն բան, վանել այն մտածումները որոնք իր գլխուն մէջ կը խուժէին, իրարու հետ կոտորել:

— Օ՛ք, ջիղերս թունգ ելան, կը մրմուր ինքնիքեն, այդ անիծեալ մարդն ալ ս'երկէ բուսաւ այսօր ... ախ, մէյ մը քունս տանը ...

Ու աչքերը կը խփեր բոլոր ուժովը, բայց ի զո՛ր, միշտ հո՛ն, իր առջեւն էր Ալրամը, որ կը յառաջանար զէպի իրեն, նաւակին մէջ, երկար մուշտակովը եւ վիզը շալ մը փաթթած, ու ականջին կը թրթռային Գարեգինի խօսքերը. « Հիմակ մեր ձեռքը ինկաւ անիկա, առանձին տեղ մը պիտի տանիմ, դուն ալ պիտի գաս և հո՛ն պիտի մեռնենք ... »

Լուսնալու զէմ՝ ա՛լ քունը տարաւ: Երբ արթնցաւ կէսօր եղեր էր արդէն: Գիշերուան մղձաւանջը անցեր էր: Երեսը լուաց ու զուրս ելաւ ճաշելու: Պայծառ, զուարթ արեւը բոլորովին կերպարանափոխեց զինքը: Ախորժակով ճաշ մը ըրաւ ու յետոյ եկաւ Փաշա Լիմանիի ծովեզերեայ մէկ սրճարանը:

— Հա՛, թղկի միտքս ինկաւ, մտածեց, քրոջս նամակին պատասխանը պիտի մտնայի, հոս նստիմ գրեմ:

Եւ յուսալից, զուարթ, կատակախառն նամակ մը գրեց: Աթէնքի մէջ իր գտած յաջողութիւնները պատմեց, ըսաւ որ իրր գոհարեղէն ճանչցող համբաւ մը սկսած էր ունենալ, թէ մեծ յոյս ունէր քիչ ատենէն լաւ զիրք մը շինելու և թէ այն ատեն անմիջապէս Աթէնք պիտի բերել տար մայրն ու քոյրը: « Քիչ մըն ալ ակրանիդ սխմեցէ՛ք ու ամէն բան կարգին պիտի մտնայ. քանի որ ես սղջ ետ զուրք մտածելիք բան մը չունիք, քնաւ հոգ մի՛ ընէք ու պատրաստ եղէք ոչ զրելուս սէս ճամբայ ելլէք ու հոս գաք: » Նամակը վերջացուց այսպէս, կարդաց և ուրախութեամբ պահարան գրաւ:

— Խեղճ մայրս ու քոյրս երբ ատիկա կարդան պիտի միւթարուին ու սիրտ առնեն, կը խորհէր:

Ու կը հաւատար իր գրածներուն. « Ինչո՞ւ չէ, կը մըտածէր, հոս իրա՛ւ որ ինձի չափ քարէ հասկցող չի կայ. քանն այն է որ աշխատելու, ապին անդին պիմելու և ճանչցուելու է: Մէյ մը որ մեծ գոհարավաճանկըր զիս գնահատեն, ա՛լ զորոս կարգին կը մտնայ. պիտի աշխատիմ ասոր համար ու պիտի յաջողիմ ... »

Արշակ այդ զուարթ երագներուն մէջ մտորած՝ ապագային համար խորհուրդներ կ'երկնէր, երբ յանկարծ յիշեց Գարեգինը:

— Ի՞նչ կ'ընէ կոր արդեօք, մտածեց, այսօր չեկաւ զիս զանելու. բայց վստահ եմ որ ինձի պէս յատուուն արթնցած ատենը արդէն բոլորովին մոռցած է երկուան իր խենթ ուխտ խօսքերը:

Յետոյ խորհեցաւ որ գուցէ այդ երէկի ըրած տղա-  
յական խօսքերուն համար չէր համարձակեր կոր երեւ-  
ալու և փափաք մը զգաց զայն տեսնելու և թիչ յը հետը  
կատակելու:

Ժամը իրիկուան չորսին մօտեցեր էր. ոտք ելաւ և  
ուղղուեցաւ դէպի Բիրէ:

— Այս ժամուս մաքսատան դիմացի սրճարանը նըս-  
տած ըլլալու է Ալբրամին սպաննիչը, ըսաւ միտքն ի վար  
խնդալով:

Կէս ժամ ետքը հասաւ այդ սրճարանը որ փախստական  
Հայերու զխաւոր ժամադրաւայրն էր և ուր գրեթէ միշտ  
քսանի չափ Հայ կը գտնուէր նարտ խաղալու զբաղած:

Գարեգին հոն չէր:

— Պարոն Գարեգինը տեսա՞ք, հարցուց, խօսքը ուղ-  
ղելով չորս հինգ երիտասարդներէ բաղկացած խմբի մը:

— Չէ՛, այսօր մէջտեղ չեկաւ:

Արշակ՝ յուսահատած՝ մեկնելու վրայ էր, երբ թիչ մը  
անդին նստող Հայ մը որ լսած էր հարցումը, գոչեց.

— Ո՞ր Գարեգինը կը հարցնես կոր ... սա Սամա-  
թիացին:

— Այո՛:

— Ես կէսօրին մօտերը հանդիպեցայ իրեն կայարա-  
նին քով. Աթէնք գնաց կարծեմ: Հետն ալ մէկը կար:

— Ո՞վ էր:

— Չիյտեմ, Հայ չէր, ձերմակ մօրուքով մէկը. Ես-  
հուտի կը նմանէր կոր:

Արշակին գոյնը նետեց: Յայտնի չընելու համար իր  
յուզումը՝ «Շնորհակալ եմ» ըսաւ եւ անմիջապէս հե-  
ռացաւ:

Յուզուած, շփոթած կը քալէր քարափին երկայնքը,  
առանց գիտնալու թէ ո՛ւր պիտի երթար: Իր ցորեկուան  
զուարթութիւնը տեղի տուած էր այս անգամ ո՛չ թէ առ-  
ջի օրուան հոգեկան տագնապներուն, այլ տեսակ մը  
բարկութեան զոր կը զգար Գարեգինին դէմ:

— Խենթ է աս տղան, պարզապէս խենթ է, կ'ըսէր  
ինքնիրեն: Իրեն ի՞նչ Ալբրամին ըրած գէշութիւնները. իր  
հայրն ու եղբայրն են սպաննուողները, իր ստա՛կն է  
գողցուածը ... զարմանալի բան: Պէտք է անպատճառ վերջ  
մը տալ այդ յիմարութեան:

Այլանդակ խորհուրդ մը անցաւ միտքէն: Մտածեց  
անմիջապէս շոգեկառք նստիլ Աթէնք երթալ, փնտռել զըտ-  
նալ Ալբրամն ու Գարեգինը ու Ալբրամին ըսել որ զգուշա-  
նայ իր նոր բարեկամէն. ու այս նպատակով քայլերը շըտ-  
կեց դէպի կայարան: Կայարան հասած էր երբ Աթէնքի  
կառախումբը եկաւ: Արշակ գնաց ելքի դրան մօտ կեցաւ  
զուրս ելլողները դիտելու համար, մտածելով որ գուցէ  
Գարեգին ու Ալբրամ անոնց մէջն են: Յանկարծ սիրտը  
նետել սկսաւ. նշմարած էր իր բարեկամը որ Հրեային հետ  
խօսակցելով կը յառաջանար: Գարեգին ինքն ալ տեսած  
էր Արշակը և բարկաճայթ նայուածքներ կ'արձակէր ա-  
նոր: Արշակ շփոթեցաւ եւ գնաց շուտ մը անկիւն մը կըծ-  
կուիլ: Հագիւ թէ Հրեան ու Գարեգին հրապարակ ելած

էին, երբ Արշակ տեսաւ որ իր բարեկամը ետ դարձաւ ու  
մտաւ կայարանին սրահը. հասկցաւ որ զինքը կը փըն-  
տուէր եւ մօտեցաւ անոր:

— Կայարանին քովի սրճարանին պարակըը սպասէ  
ինծի, հիմա կուգամ, գոչեց Գարեգին, պէտք է որ ան-  
պատճառ հետդ խօսիմ:

— Ես ալ կ'ուզեմ խօսիլ հետդ, շո՛ւտ եկուր, պա-  
տասխանեց Արշակ:

Գարեգին նորէն դուրս նետուեցաւ:

— Ա՛լ պիտի վերջանայ աս խնդիրը, ա՛լ պիտի վեր-  
ջանայ, վճոց Արշակ դէպի ցոյց տրուած ժամադրաւայրը  
երթալով:

Կը խորհէր թէ ի՞նչ զիրք բռնելու էր Գարեգինին նը-  
կատմամբ: Խթնութեամբ անուշութեամբ պէտք էր խօսիլ. բա-  
ցարձակապէս յայտնելու էր իր հակառակութիւնը Գարե-  
գինի խորհուրդներուն դէմ, թէ համամիտութիւն կեղծելով  
պէտք էր վարուիլ: Այս մտածումներուն մէջ կ'ալեծփէր  
երբ՝ մէկէն՝ գաղափար մը յղացաւ:

— Գտա՛յ, գտա՛յ, գոչեց խենթ հրճուանքով մը:

Եւ շուտով իր գաղափարէն, անմիջապէս շիչ մը ըե-  
չինա ապսպրեց: Գտած միջոցը ա՛յնչափ վճռական, ա՛յն-  
չափ հիանալի նկատեց որ ա՛լ բոլորովին հանդարտեցաւ  
և՛ ուրախ՝ սպասեց իր բարեկամին գալուն:

Գ.

Իրեն չափ ուրախ էր նաև Գարեգին երբ պարտէջ մը  
տաւ. միայն պարտք համարեց պզտիկ յանդիմանութիւն  
մը ուղղել իր բարեկամին, գործած անխոհեմութեանը  
համար:

— Ես չըսի՛ որ մէջտեղ չեկես, Ալբրամին աչքին չե-  
րեաս. թիչ մնաց պիտի տեսնար քեզի ու ամէն բան շուրը  
պիտի իյնար: Ի՞նչ գործ ունէիր կայարանը ճի՛շդ մեր  
գալու միջոցին:

— Իրաւունք ունիս, վրայ բերաւ Արշակ, շա՛տ իրա-  
ւունք ունիս, բայց մտքն չէր անցնէր որ ձեզ հոն պիտի  
հանդիպէի: Տե՛ս ի՞նչ եղաւ. այս ցորեկ Աթէնքէն մէկը և,  
կաւ ըսելու որ անպատճառ իրիկունը երթամ տեսնեմ Պ.  
Քունտուրոսը, սա՛ Օտոս Սլատիոնի մեծ զոհարավածառը:  
Գործեր ունի եղեր ինձի յանձնելիք, չուզեցի այդ գեղե-  
ցիկ առիթը ձեռքէ փախցնել: Կը ներես ... բարեբախտա-  
բար անխոհեմութիւնս հետեանք մը չունեցաւ: Արգէն ձե-  
զի տեսնալուս պէս դացի անկիւն մը ծածկուեցայ:

Եւ Արշակ ընչինայի շիշը առնելով Գարեգինին դա-  
ւաթը լեցուց:

— Ինչ որ է, եղածը եղած է, ըսաւ Գարեգին, բայց  
գոնէ ասկէ ետքը աւելի խոհեմ եղիր: Է՛յ, երէկուրնէ ի վեր  
ի՞նչ մտածեցիր խօսածներուս վրայ ...

— Նախ՝ միշտ հաստամ ես քու որոշումիդ մէջ:

— Այո՛:

— Պիտի մեռնես այդ մարդը:

— Այո՛:

— Եղբայր, ի՞նչ ըսեմ, շարունակեց Արշակ, գիշերը, մինչև առտու առոր վրայ մտածեցի: Իրաւունք ունիս, այդ մարդը դարձելի արարած մըն է, չար, վնասակար, թունաւոր օձ մը, և առանց խղճի խայթի կարելի է սպաննել զայն ... բայց կ'արժէ՞ այդ անպիտանին համար վտանգուիլ ... :

— Վտանգի բան չի կայ, ամէն բան մանրամասնօրէն խորհած եմ, պատասխանեց Գարեգին խորհրդաւոր ձևով մը, եւ ամէն բան փափաքածէս աւելի յաջող կերպով կարգադրուելու վրայ է, այնպէս որ կը սկսիմ կոր հաւատալ թէ աներեղոյթ զօրութիւն մը կը հսկէ կոր այս արդարութեան գործին վրայ: Իո՞հ եթէ, հակառակ ամէն զոռույթեան, ձախորդութեամբ մը, գործը կատարուելէ վերջը մէջտեղ ելլէ ու բռնուիմ, ան ալ հոգս չէ: Ես ո՛չ հայր ունիմ ո՛չ մայր, ո՛չ ալ քոյր կամ եղբայր, աշխարհի մէջ միս միտակ մէկն եմ, կեանքս ամբողջովին ինձի կը պատկանի եւ ազատ եմ ուղածիս պէս զայն գործածել: Երէկ, առաջին վայրկեանին, քեզի ալ կ'ուզէի ասոնակից ընել արդարութեան այս գործին, խորհելով որ ասով զուցէ թեթևացած պիտի ըլլայիր քու կիրքներուդ սպաննութեան ցաւը. բայց յետոյ մտածեցի թէ պարտաւոր ես ինքզինքդ խնայել քու յօրդ ու քրոջդ համար, ուրոնց միակ յոյսն ես հիմակ: Թէև նորէն կը կրկնեմ, գործը անանկ վիճակի մը մէջ մտնալու վրայ է որ գրեթէ ամենափոքր վտանգաւոր հետեւանք մը պիտի չունենայ որ եւ է կերպով ... :

— Շատ աղէկ ուրեմն: Կը տեսնամ որ անկարելի է քեզ ետ կեցնել խորհրդէդ ու այդ մասին ալ պիտի չպնդեմ: Գալով ինձի, ինչպէս ըսիր, ես անձիս տէրը չեմ եւ չեմ կրնար մասնակցիլ վրէժխնդրական խորհուրդիդ գործադրութեանը, բայց բոլորովին հեռու ալ չեմ ուզեր մնալ եւ ուզեմ որ զոնէ ձեռքէս եկած օժանդակութիւնը պահանջես ինէ: Շատ մը բաներու մէջ օգտակար կրնամ ըլլալ քեզի ... :

— Անշուշտ, անշուշտ, վրայ բերաւ Գարեգին, և ասի. կա պիտի պահանջեմ քեզէ: Երբոր ատենը գայ, շատ բաներ ունիս ընելիք: Շիտակը ես ալ բնաւ փափաք չունիմ այդ շունին համար զոհ երթալու եւ վտանգ եղի՞ր որ ամէն ջանք պիտի ընեմ գործը կատարելու ետքը օձիքս ազատելու: Ինձի համար ասոր մէջն է արժանիքը: Բայց ինչ որ ալ ըլլայ, արդարութիւնը պիտի կատարուի ... ասիկա անզառնալի կերպով որոշուած է:

Պահ մը լռութիւն տիրեց երկու խօսակիցներուն միջև: Արշակ բեռնայի նոր շիշ մը ապսպրեց:

— Պատմէ՛ նայինք այսօր ի՞նչ ըրիք Աթէնք, ըսաւ, լռութիւնը խզելով:

— Աթէնք տուն փնտռելու գացինք: Առտուն երբ Ավրամը տեսայ, ըսաւ որ ընտանիքը գալէն ետքն ալ դեռ քանի մը շաբաթ հոս մնալու միտք ունի. ասոր վրայ խորհուրդ տուի իրեն անմիջապէս Աթէնք պղտիկ տուն մը վարձելու, ամսուան մը համար, և ըսի որ շատ աւելի աման կ'ըլլայ իրեն, քան թէ ընտանիքով պանդուկը բնակիլը,

— Խօսքդ չմոռնաս, հոս ո՞ր պանդուկը ինչպէս է:

— Սա՛ մօտը ... Բարթէնոն: Ըսածներուս համոզուեցաւ ու միասին գացինք Աքորբոլիսի ետեւները, պարտեղի մէջ, կահաւորուած պղտիկ տուն մը գտանք, ամսական հարւեր տրախմիի. անմիջապէս բռնեցինք ու բանալին ալ առաւ: Վաղը չէ միւս օր հոն պիտի փոխադրուի: Կարծես յատկապէս մարդ խղղելու համար շինուած տեղ մըն է: Քովերը տուն չի կայ, ամէնէն մօտի տունը քանի մը հարիւր քալ անդին է ... երբեք չէի յուսար որ զիպուածը ա՛յսչափ նպատաւոր պիտի ըլլար ինձի:

— Հիմա ի՞նչ է ծրագիրդ:

— Շատ պարզ: Մէկ մը որ հոն հաստատուի, գիշեր մը միասին իրեն պիտի երթամ, անշուշտ ընտանիքը գալէն առաջ, ու տանը մէջ պիտի սպաննեմ զինքը: Յետոյ, պիտի ձգեմ փախչիմ: Մէկ երկու օր ետքը պիտի գտնան զիսկը, ես արդէն հեռացած պիտի ըլլամ: Ինք հոս մարդ մարդասանք չունի, հետեւաբար քննութիւնը անուշ տեղը պիտի կապուի, մանաւանդ որ զիտես թէ Յոյները ո՛րչափ կ'ատեն Հրեաները և թէ Հրեայի մը սպաննութիւնը ո՛րչափ չնչին դէպք մը պիտի նկատուի:

— Գործը ա՛յնչափ զիրին կ'երեւայ կոր հիմակ ինձի, որ ես ալ փափաք կը զրա՛մ կոր մասնակցելու, ըսաւ Արշակ խնդալով:

— Անանկ չէ՞:

— Բայց Ավրամը քու մասիդ որ եւ է կասկած չունի՞ բնաւ:

— Ընդհակառակը, բոլորովին վստահութիւնը զրաւած եմ, զիս իրբեւ կատարեալ Յոյն կլլած է և միշտ գոհութիւն կը յայտնէ որ ինձի պէս թուրքերէն զիտցող ազնիւ անձի մը պատահած է: Ուրիշ Հրեաներուն պէս ա՛յնչափ կծծի ալ չէ և ինձի հաճելի ըլլալու համար զրամը չի խնայեր կոր ... ձեռնէ գողցած զրամը:

— Աղէկ. ըսել է ամէն բան կարգին է:

— Այո՛, միայն թէ, շարունակեց Գարեգին խնդալով, կարծես մարդը նախազգացում մը ունի թէ Հայերուն ձեռքով զլուսն փորձանք մը պիտի գայ: Կ'ուզէ որ Հայ չը գտնուած ճաշարան մը կամ սրճարան մը երթանք միշտ: Քանի մը անգամ խօսք բացաւ այստեղի փախստական Հայերուն վրայ. « Խասգեղցիներ կ'ան, ի՞նչ կ'ընեն, կատաղած են թիւրքերուն դէմ » և այլն հարցումներ ըրաւ:

— Ի՞նչ պատասխանեցիր:

— Ըսի որ Հայերուն հետ բնաւ յարաբերութիւն չունիմ եւ թէ չեմ սիրեր զիրենք:

— Շիշ մըն ալ պարպենք գործին յաջողութեանը համար հարցուց Արշակ:

Գարեգին ժամացոյցը նայեցաւ:

— Օ, գոչեց, ժամը եօթը եկեր է, պէտք է անմիջապէս երթամ: Եօթնուկէսին կերակուր պիտի ուտենք Ավրամին հետ ու յետոյ Ֆալէրօ՝ թատրոն պիտի երթանք: Պնդեց որ այս իրիկուն անպատճառ միասին անցընենք:

Ու ոտք ելաւ:

— Հա՛, ըսաւ, խօսք տո՛ւր որ ուրիշ անգամ այսօր-  
ուան պէս անխոհեմութիւն չընես:

— Այո՛, այո՛, կը խոստանամ, վստահ եղիր:

— Մնաս բարով:

Պատանին հեռացաւ:

— Պարզապէս խելքին դպած է, մրմոսց Արշակ, կե-  
ցած տեղը ողջ գլուխը աւետարանին տակ գնել կ'ուզէ  
կոր: Կ'երևայ որ շարժերը բիշ մը խանգարած են իր միտ-  
քը: Ինչ որ է, բարեբախտաբար ասոնց ամէնուն առաջը  
պիտի առնուի: Գտած միջոցս հրաշալի է:

Արշակ սպասուորը կանչեց և նամակ գրելու համար  
պէտք եղածը ուզեց:

— Ավրամ տաճկերէն աղէկ գիտէ ու կրնայ դիւրու-  
թեամբ կարգալ, մտածեց, որչափ ալ գիրն ու շարա-  
դրութիւնը գէշ ըլլայ:

Ու հետեւեալ իմաստով թիւրքերէն նամակ մը գրեց.

«Մեծ վտանգ մը կը սպառնայ ձեզի: Հոս գտնուող  
Հայերը, որոնք լսած են ձեր ըրածները խափոյտ մէջ,  
որոշած են սպաննել ձեզի որ եւ է միջոցաւ մը: Պէտք  
է որ անմիջապէս հեւանաք Յունաստանէն: Հոս ամէն  
վայրկեան ձեր կեանքը վտանգի մէջ է: Յեր զբաղի,  
խափոյտի ոսկերիչ Սարգիս աղային աղան՝ Արշակը՝ հոս  
է և ամենուն պատմած է որ դուք եղած կը իր հօրն ու եղ-  
բօրը սպաննութեան պատճառը: Օր մը պիտի իմանաք  
թէ ո՞վ է այն անձանօթ բարեկամը որ այս տողերը կը գրէ  
ձեզի: Նորէն կը կրկնեմ, չո՛ւտ փախէք Յունաստանէն:»

Արշակ նամակը գրելէն ետքը սպասեց մինչեւ ժամը  
ինը, որպէս զի ապահով ըլլայ թէ Ավրամ ու Գարեգին  
մեկնած են, ու յետոյ գնաց օթել Բարթէնոն և նամակը  
ձգեց Ավրամին հասցիին:

Այդ գիշերը Արշակ հանգիստ քնացաւ մինչև առտու:

Դ.

Կէս գիշերին մօտ Ավրամ ու Գարեգին վերադարձան  
թատրոնէն: Պանդոկին զրան առջեւ պահ մը կեցան իրար-  
մէ բաժնուելէ առաջ:

— Պարոն Խրիսթօ, ըսաւ Ավրամ հայ պատանիին զոր  
այս անունով միայն կը ճանչնար, վաղը կը սպասեմ քեզի,  
առտուն ժամը տասնին:

— Անպատճառ կուգամ:

— Քանի մը մանր մանր բաներ կան տանը համար  
գնելիք, միտին երթանք: Գիտեմ որ շատ ձանձրութիւն  
կուտամ կոր քեզի, բայց ի՞նչ ընեմ, ուրիշ մէկը չունիմ հոս  
և լեզու ալ չեմ գիտեր: Բայց վստահ եղիր որ քու ըրած  
ծառայութիւններուդ տակը պիտի չմնամ:

— Կ'աղաչեմ, չխօսիք ատոր վրայ, ծառայութիւն  
չի կայ. երկուքս ալ Պալսեցի ենք, բնական է որ օտար  
երկրի մը մէջ ձեռքերնէս եկածը իրարու պիտի ընենք օղ-  
տկար ըլլալու համար:

— Ենթահակալ եմ, գիշեր բարի:

Ավրամ սենեակը ելաւ: Պանդոկին ծառան Արշակի

նամակը բերած՝ սեղանին վրայ դրած էր, աշտանակին  
քով, այնպէս որ Ավրամ սոմը վառելուն պէս նշմարեց  
զայն: Առաւ ու հասցէն կարդաց:

— Թիւրքերէն նամակ մը, ինծի ուղղուած, ի՞նչ կըր-  
նայ ըլլալ, մտածեց:

Յետոյ պահարանը քննելով՝

— Բոսթայով ալ չէ զրկուած, այլ մէկը բերեր ձեզ  
է. արդեօք Պոլսէն ծանօթ մը եկաւ այսօր...:

Հագիւ թէ առաջին տողերը կարգալ սկսաւ, Հրեային  
գոյնը նետեց, ու երբ նամակը վերջացուց՝ յուզումէն գրե-  
թէ կը դողար: Սարսափահար չորս կողմը կը նայեր, աչ-  
քերը սոսկումով լեցուած: Մէկէն դէպի դուռը գիմեց,  
նիզը դրաւ ու բանալիով կղպեց, յետոյ յանկարծ՝ անկող-  
նին սկսաւ նայիլ:

— Արդեօք անկողնին տակ մէկը պահոււած է, կը  
մտածէր, սակայն չէր համարձակեր ծոխ նայելու:

— Եթէ մէկը կայ, նայելուս պէս վրաս պիտի յար-  
ձակի ու դուռն ալ կղպած եմ, բանալ փախչելու ժամա-  
նակ պիտի չունենամ...:

Մուր առաւ, գնաց մինչեւ դուռը, բացաւ ու հոնկէ  
ծռելով նայեցաւ անկողնին տակը: Մարդ չի կար:

Ի՞նչ մը հանդարտած, կրկին դուռը կղպեց և սկսաւ  
հանուիլ:

— Ի՞նչ ընելու է հիմակ, կը խորհէր, ասոնց ձեռքէն  
ազատելու համար... Արշակը հոս է եղբւր... ան ըլլալու  
է զուրիսին... Ի՞նչ ընեմ, ստիկանութեան յանձնեմ նա-  
մակը, բայց հոս թիւրքիա չէ, անստորագիր նամակի  
մը անորոշ խօսքերովը մարդ չեն բռներ... ասկէ զատ  
շատ մը խնդիրներ մէջտեղ կրնան ելլալ... յետոյ այս  
անպիտան Յոյները հակառակ են մեզի ու բանի տեղ պի-  
տի չգնեն Հրեայի մը բողոքները: Չգիշ երթալու է, ու-  
րիշ ճար չի կայ, անմիջապէս երթալու է... բայց մինչև  
զացած վայրկեանիս...:

Ավրամ անկողին մտաւ. նորէն կարդաց նամակը.  
«Հոս ասէն վայրկեան ձեր կեանքը վտանգի մէջ է», այս  
տողերը կը զարհուրեցնէին զինքը:

— Ա՛խ, մէյ մը լուսնար, առտու ըլլար...:

Ելաւ անկողնէն ու քննեց զրան կղպանքը. բաւա-  
կան հաստատուն երեցաւ իրեն. յետոյ գնաց դէպի պա-  
տուհանը, տեսնելու համար որ կարելի՞ էր անկէ ներս  
մտնել:

— Չէ՛, մտածեց, այս կողմէն վախ չի կայ...:

Անկողին մտաւ: Նամակը կը տանջէր զինքը, նորէն  
առաւ սեղանին վրայէն ու կարդաց:

— Խրիսթօն արդեօք անոնց մարդն է, կասկածեցաւ  
Ավրամ, բայց այդ մտածումը երկար չտեւեց: Չէ՛, կ'ըսէր  
ինքնիրեն, այդ տղան հանգարտ, աղէկ տղայ մը կ'երե-  
ւայ, ասկէ զատ Հայերը չի սիրեր կոր ու հետերնիւ յա-  
րաբերութիւն չունի. տկար, հիւանդուտ մէկն է, ատանկ  
գործերու մէջ չի կրնար մտնել:

Անկողնին մէջ կը տապալակէր ու կը ջանար քունը վանել:

— Արդէն հոս ոտքս դրած վայր, անկէս նախազգացում

մը ունեցայ որ Հայերը գլխուս բան մը պիտի բերեն . իցի՛ր թէ շիտակ ճամբաւ շարունակած ըլլայի մինչեւ Եգիպտոս . . . Հոն մեծ տեղ է, հետքդ դիրսու չեն գտներ :

Ու այսպէս տաղնապալից մտածումներու մէջ, Ալրամ արթուն մնաց մինչեւ լոյս : Վերջապէս հաստատաբար ուրոշեց պատրաստութիւնները տեսնել ու մեկնիլ Եգիպտոս :

Ժամը ութն էր երբ ծառան կանչեց եւ ըսաւ որ պանդուխտ գործակալը, որ բիշ մը թիւրքերէն կը հասկնար, իրեն զրկէ :

— Երբ Ալեքսանդրիայի համար շոգենաւ կայ, հարցուց Ալրամ, մարդը ներս մանելուն պէս :

— Վաղը, կէս օրէն ետքը, ուստական և խըտիվիէ :

— Լա՛ւ, խըտիվիէի համար ինծի երկրորդ կարգի տոմսակ մը ա՛ն :

Ու չորս օսկի տուաւ ձեռքը :

Յետոյ անմիջապէս նամակ մը գրեց Պալիս, իր ընտանիքին, իմաց տարու համար որ Եգիպտոս կ'երթար և հրահանգ տուաւ որ ուղղակի Ալեքսանդրիա գան :

Նամակը ծառային հետ զրկելէ ետքը, Ալրամ սընտուկները կապեց :

— Ասոնք այսօրուրէ գործակալին հետ կը զրկեմ շոգենալին ընկերութեան գրասենեակը, կ'ըսէր, թո՛ղ իրենք բեռնեն ու իմ անունիս զրկեն Ալեքսանդրիա . թէ քիչ մը սուղ պիտի ըլլալ, բայց փշաս չունի . չեմ ուզեր որ վաղը բեռներով շոգենաւ երթամ ու Հայերը զիս տեսնան, կ'եղեն «վա՛յ ձեռքերնուս կը փախչի կոր» ըսելով գլխուս փորձանք մը կը բերեն . . . :

Ալրամ այնչա՛փ կ'աճապարէր իր մեկնումի կարգադրութիւններովը, որ պանդուխտ գործակալը շոգենալին տոմսակն առած վերադառնալուն պէս՝ բեռները կրել տուաւ եւ պանդուխտ տիրովէն իր հաշիւը ուզեց մաքրելու համար :

Ժամը ճիշդ տասն էր երբ Գարեգին երեցաւ դրան առջև : Նշմարելով Հրեային մտատանջ, զբաղկոտ կերպարանքը, անմիջապէս հարցուց .

— Ինչ կայ, Ալրամ էֆէնտի, իրարանցումի մէջ էք :

— Բան մը չի կայ, պատասխանեց միւսը որ յանկարծ լաւագոյն համարեց ծածկել նամակին պատմութիւնը իր նոր բարեկամէն . այս առտու ստիպողական հեռագիր մը առի Ալեքսանդրիայէն ու պէտք է որ անմիջապէս մեկնիմ . ասոր համար պատրաստութիւններս կը տեսնամ կոր :

Գարեգին թէ և այս անակնկալ լուրէն ցնցուած, սակայն բաւական ճարպիկութիւն ունեցաւ իր զարմանքը ցոյց չի տալու :

— Ուրեմն անմիջապէս կ'երթա՞ք, հարցուց բնական, գրեթէ անտարբեր շեշտով մը :

— Չէ, այսօր զժբախտաբար շոգենաւ չի կայ եղեր, վաղը ցորեկէն ետքը պիտի երթամ . բայց բեռներս արդէն զրկեցի ու ամէն կարգադրութիւններս ըրի :

— Կը յուսամ որ այդ մեկնումը ձախորդ լուրի մը ետեւանքը չէ, շարունակեց Գարեգին՝ որ միտքը կը տան,

չէր հասկնալու համար այդ յանկարծակի մեկնումին շարժառիթը :

— Չէ՛, ընդհակառակը կարեւոր ու շահաբեր գործի մը համար է . . . որուն յաջողութեանը համար անհրաժեշտ է անմիջապէս երթալս :

— Է՛յ Աթէնքի վարձած տաններնի՛ց :

— Թո՛ղ այդ չորս օսկին ալ կորսուի, պատասխանեց Ալրամ, ձեռքի արհամարհոտ շարժումով մը :

— Ուրեմն ա՛լ ինծի պէտք չունիք այսօր :

— Ո՛չ, մանաւանդ որ բիշ մըն ալ անհանգիստ եմ ու գուրս պիտի չեղլեմ, սենեակս պիտի ճաշեմ, կ'երեւայ որ երէկ զիշեր պաղ եմ առեր : Վաղը կէսօրին եթէ գաս, շատ շնորհակալ կ'ըլլամ . մէկտեղ կ'երթանք շոգենաւ եւ քեզի հետ ունեցած պղտիկ հաշիւս ալ կը կարգադրենք :

Ալրամ, ամէն անգամ առիթը ներկայանալուն, զգացընել կուտար Գարեգինին որ իր ծառայութիւնները անվճար պիտի չմտային :

Գարեգին Հրեային հետ անտարբերութեամբ խօսելով հանդերձ, կատաղութենէն ինքզինքը կ'ուտէր տեսնելով որ զոհը ձեռքէն կ'երթայ : Պահ մը խորհեցաւ հո՛ն, սենեակին մէջ, յարձակիլ լրան ու անմիջապէս «արդարութեան գործը», ինչպէս ինք կ'ըսէր, կատարել : Բայց չը յաջողելու հաւանականութիւնը և բռնուելու անխուսափելիութիւնը զինքը կեցուցին : — «Չ'արժեր որ այդ շանը համար վտանգուիմ, մանաւանդ առանց յաջողելու, մտածեց, սատանան զինքը կը պաշտպանէ կոր, ճար չի կայ բան մը ընելու» :

— Մնաց բարով Ալրամ էֆէնտի :

Գուրս ելաւ : Սանգուլէն իջած ատեն ուզեց ետ դառնալ :

— Գոնէ երթամ, ու Հայ ըլլալս իրեն յայտնել ու վերէն վար լուամ զինքը, կ'ըսէր :

Բայց վրէժխնդրութեան այդ ձեւը, Ալրամի գործած ոճիւններուն փոխարէն, այնքա՛ն ճշմամբ, այնքա՛ն ծիծաղելի երեցաւ իրեն որ նախընտրեց ճամբան շարունակել :

Ե. Օ.

(Շարունակելի)

### ԱՆՑԵԱԼԻ ԴԷՄՔԵՐ

Բ.

Գրիգոր Օտեան 1850-1880ի սերունդին էն սիրուած ու յարգուած դէմքերէն մէկն է, եւ Հայ ազգը շուրջսեպտանոր մահուանը իր համակրանքին արտայայտութեանը համար : Հոնրային կեանքին սկզբնաւորութեան թուականէն մինչեւ իր մահը Օտեան սիրոյ և մեծարանքի փայլափայնեցներովը գգուեցաւ . ու հիմակ ալ գուրգուրալիք եր-

կիրառութեամբ կը յիշատակուի իր անունը: Եստ ան-  
գամ մտածեր եմ այս մեծ ժողովրդականութեան պատճա-  
ռին վրայ, վասն զի Գրիգոր Օտեան Հայոց սրտին ու  
մտքին վրայ տիրապետելու բացառիկ ո՛ր եւ է իրաւունք չու-  
նի: Ո՛չ ազգին զրական օգուտներ պարգեւող մեծ զործ  
մը ստեղծած է, եւ ո՛չ ալ հայ մատենադրութեան թողած  
է գիրք մը զոր սերունդները իրարու փոխանցեն: Մենք  
մէկ կամ երկու սերունդ ետքը օրուան կեանքը այդ ա-  
նունը պիտի մոռնայ. պատմութիւնը պիտի արձանագրէ  
զայն 19րդ. դարուն մեր գրական և քաղաքական անձնա-  
ւորութեանց ընդհանուր շարքին մէջ միայն, առանց մե-  
նաշնորհեալ էջ մը նուիրելու անոր:

Օտեան ժողովրդական էր ու ժողովրդական կը մնայ,  
վասն զի իր ազգին համար եղաւ մարմնացումը հայ պաշ-  
տօնէի, հայ քաղաքագէտի, հայ ազգասէրի, հայ կրօ-  
նասէրի, հայ գրագէտի մը տիպարին զոր դարերու ճըն-  
շումին ներքե խոնջ ժողովուրդ մը ինքն իրեն համար ըս-  
տեղծած է: Օտեանի երազանքներուն ու պատրանք-  
ներուն մէջ հայ ազգին երազանքներն ու պատրանքնե-  
րը կը ցոլանան: Ամփոփելով ուրեմն այդ բազմազան  
կեանքին քանի մը յատկանշական դիժերը կարելի է  
զործնականապէս ըմբռնել Օտեանի և իր ցեղին միջև այն  
հոգեկան սերտ ազգակցութիւնը որ կը բացատրէ այդ  
ազնուամիտ ու ազնուասիրտ մարդուն վայելած ժողովրդ-  
դականութեան գաղտնիքը,



Թիւրքիոյ Հայերը երկրին ընդհանուր վարչութեան  
մասնակցելու հակում ունին: Օսմանցիներուն մեր երկ-  
րին վրայ տիրապետութեան առաջին տարիներէն մին-  
չեւ այս դարուս առաջին կէսը Հայաստան տեսակ մը  
վարչական ինքնօրինութիւն կը վայելէր. իսկ երբ երո-  
պական դրութեամբ երկիրը մատակարարելու սկզբունքը  
զործադրուի սկսաւ, այլ ևս հետզհետէ սեղմուելով ան-  
հետացան Հայոց ունեցած կարգ մը առանձնաշնորհում-  
ները: Այդ կորուստին փոխարէն Հայերը թէ՛ կեղրոնը,  
թէ՛ նահանգները վարչական ամէն ճիւղերուն մէջ իրբ  
պաշտօնեայ ծառայելով, և օսմանեան վարչութեան  
բարձրագոյն աստիճանները հասնելու իրաւունքը զործ-  
նականապէս վայելելով, կարելոր բաժին ունեցան երկ-  
րին իշխանութեան մէջ: Բայց հայ ժողովուրդը միշտ  
խուլ հակառակութիւն մը կը զգար իրեն եւ իր վրայ տի-  
րապետող ցեղին միջև: Կառավարական հայ պաշտօնեա-  
ները համակերպելով թիւրք իշխանութեան տրամադրու-  
թեանցը, իրենց ազգին աննպաստ ընթացքի մէջ կը զրտ-  
նուէին յաճախ: Երբ թիւրք իշխանութիւնը իր վայելած  
քաղաքական խնամակալութիւններէն ստիպեալ այլ եւս  
արտաքին երևոյթով չմնաց ինչ որ էր մինչեւ 19րդ. դա-  
րուն առաջին կէսը, և ինչ որ պիտի ըլլար 1893ին, այ-  
սինքն՝ տաճիկը: ա՛լ Հայոց լեզուակապները սկսան քակ-  
ուիլ. Պոլիս մամուլն ու ժողովուրդը յանդուգն ազատա-

կաններ եղան, վազն ղի անպատիժ մնալու ապահովու-  
թիւնը ունէին: Ու կառավարական հայ պաշտօնեաներու  
զէմ ատելութիւնը բացարձակօրէն կը յայտնուէր: Ժա-  
մանակին մամուլին մէջ «Դրան զործիք էֆէնտիներ» բա-  
ցատրութիւնը այնքան ընթացիկ էր որքան «մեր հայրա-  
զուծ եւ բարեխնամ կառավարութիւն» հասարակ-տե,  
դիքը: Դրան զէմ Պոլսոյ հայ մամուլին համարձակութեան  
մասին դաղափար մը տալու համար յիշատակեմ միայն  
հետեւեալ դէպքը:

Հանդուցեալ Օզսէն Խօճասարեան հրապարակագիրը  
որ 1868էն 78 նշանաւոր տեղ մը զրաւեց Պոլսոյ հայ  
մամուլին մէջ, օր մը խմբագրական յօդուածով, մը զոր  
հրատարակեց իր Նորագիրք, օսմանեան կայսրութեան  
համար սահմանադրութիւն կը պահանջէր: Այն ատեն-  
ները թէև զրաքննութիւն չի կար, բայց տպագրական  
տեսչութիւն մը միշտ գոյութիւն ունէր, ու տպագրական  
օրէնքը Կրեաէի ապստամբութեան պատճառաւ 1866ին  
զադարուծի դատապարտուած ըլլալով — զազարում որ  
մինչեւ հիմակ կը տեւէ, թէև Կրեաէն ազատած է —  
կառավարութիւնը ինչպէս որ ուզէր կրնար թերթերը պատ-  
մել, խափանելով կամ ջնջելով զանոնք: Խօճասարեան  
Դուրը կանչուեցաւ եւ իրմէն բացատրութիւն ուզեցին  
հրատարակած յօդուածին համար: Պատասխանեց թէ  
ինք ուրիշ բան չէ ըրած բայց եթէ պաշտպանել գաղա-  
փար մը զոր բացարձակօրէն կը քարոզէ Փազը Մուս-  
թաֆա փաշա (Եգիպտոսի նախկին խտիվ Իսմայիլ փա-  
շայի եղբայրը, որ իր ժառանգական իրաւունքներէն զըր-  
կուած ըլլալով այլ եւս Պոլիս էր ու բարձր պաշտօններ  
կը վարէր): Հայ խմբագրին տուած բացատրութիւնները  
զոհացուցիչ չերեցան: Ո՛ր իսլամ նախարար մը, ո՛ր  
Բայա խմբագիր մը, ի՛նչ իրաւունքով Հայը յաւակնութիւն  
պիտի ունենար երկրին վարչական գրութեան մէջ հիմ-  
նական փոփոխութիւն մտցնելու առաջարկը ներկայացնել:  
Խօճասարեան կ՛ու յանդիմանութիւններ լսեց, ու իր  
թերթն ալ ամսուան մը զադարման դատապարտուեցաւ:  
Իրեն տրուած այս պատիժը ծանուցանելու համար Խօ-  
ճասարեան յաւելուած մը հրատարակեց, որուն մէջ կը  
յայտարարէր «Օսմանեան իշխանութիւնը իր զօրու-  
թիւնը փոխ-սնակ անգէն ու խեղճ Հայոց վրայ փորձելու  
թո՛ղ փորձէ ընդդէմ Քիւրտերուն, որոնց հարստահարու-  
թիւնները Հայամտանի մէջ ա՛լ ոչ չա՛փ ունին, ո՛չ սահ-  
ման: Հայ ազգը պիտի պարտաւորուի ղիմել էջմիածին  
ուր է իր հոգեւոր գլուխը, և անոր միջոցաւ Ռուսիոյ  
վեհափառ կայսեր պիտի ներկայացնէ Հայաստանի վի-  
ճակին խնդիրը:» Այս իմաստով եւ գրեթէ այս բառերով  
խմբագրուած էր յաւելուածը որուն հրատարակութեամբը  
Նորագիրին զազարումը երեք ամսուան բարձրացաւ: Ու  
ժողովուրդը անմիջապէս հանդանակութիւն բանալով լիո-  
վին հատոյց թերթին վեասները, որոնք շատ մեծ բան  
չէին արդէն: Այդ ժամանակուան «ժողովրդական թեր-  
թերը» կանոնաւոր խմբագրատուն, տպարան, վարչու-  
թիւն չունէին, եւ իրենց ծախքը չնչին գումար մըն էր:

Ու երեք ամիսը չլրացած Նորագիր վերատին հրատարակուելու թոյլտուութիւնը ստացաւ:

Այս ազատութենէն օգտուելով մամուլ ու ժողովուրդ միշտ կը յարձակէին էֆէնտիներուն դէմ. կասկածանքները, բողոքները մինչեւ Ազգային ժողովին տեսանք կը հասնէին: Ու օր մը Օտեան ատենապետական ատենին տխուր ձայնով մը յայտարարեց. «Ան որ իր պետական պաշտօնին ընծայած դիրութիւններէն օգտուելով այս խեղճ ու տարաբաղ զգրը իր շահերուն կը զոհէ, անիծեալ ըլլայ, երկնս անիծեալ.» ու փղովուրդը, որուն մէջ էր եւ այս տողերը գրողը, սարսուռով մը «ամէն» որոտաց: Օտեանի նշովքը ամէն սրտերը թունդ հանեց. իր շեշտը անկեղծ էր, սրտէն կը բղիւրէր, հոգիէն կը թռուչէր: Երեսփոխանութիւն ու ժողովուրդ կը զգային թէ կատակերգութեան մը հանդիսատեսները չէին:

Օտեան այս անէծքը կրնար արձակել առանց ձայնին զողջմանը, վասն զի խղճմտանքը հանդարտ պետական անձնատուութիւնն էր: Շատ փորձութեանց մղող իր դիրքին մէջ՝ միշտ պատուոյ զգացումէն առաջնորդուելով հաւասար հաւատարմութեամբ ծառայեց Դրան՝ որուն պաշտօնեան էր, ազգին որուն զաւակն էր: Հայուն եւ թիւրքին շահերուն համերաշխութեանը մէջ կը տեսնէր թէ՛ օսմանեան պետութեան, թէ՛ հայ ազգայնութեան պահպանման ապահովութիւնը: Այդ համերաշխութիւնը հաստատելու կամ ամրապնդելու միջոցը կը համարէր՝ բարեք վարչութիւն Դրան կողմէն, իր իրաւունքներուն պաշտպանութիւն ազգին կողմէն: Երբեք չը քաջալերեց թիւրք կառավարութեան քրիտոնեաներուն նկատմամբ հետեւած սխալ քաղաքականութիւնը, եւ երբեք ազգին ալ չյանձնարարեց լուռ համակերպութիւն իր վիճակին: Խորիմեան Հայրիկը Պատրիարք ընտրելու զողափարը Օտեան յղացաւ: Այս առթիւ Ալի փաշան զիտազութիւններ ընելուն, Օտեան յայտարարեց թէ ինքն ամէն պատասխանատուութիւն կը ստանձնէ: Խորիմեանի պատրիարքութիւնը Հայաստանի բարեկարգութեանց խնդրին թուականը պաշտօնապէս բացաւ:

Հայ ժողովուրդը Օտեանը յարգելով ու սիրելով հաստատած է թէ Դրան ուրիշ հայ պաշտօնեաներուն նկատմամբ իր իր ծայրայեղ հակակրօնութիւնը ո՛չ թէ քաղաքական սկզբունքի մը հետեւանքն է, այլ ազնիւ զգացումի մը թելադրութիւն: Հայը ոչ թէ կառավարական հայ պաշտօնեան կ'ատէ, այլ վատ հայ պաշտօնեան, ան որ իր աջակցութիւնը հզօրին կը վաճառէ ընդդէմ տկարին: Հայը կ'ուզէ ամէն հայ պաշտօնեայ տեսնել իբր իսրայէլացիներուն Նէէմեան որ գերութեան մէջ կը յայտարարէր Արտաշէս թագաւորին. «Ի՞նչպէս իմ երես տըրտում չըլլայ, որ իմ հարցս գերեզմաններուն տեղը եղող քաղաքը աւերակ՝ ու անոր զոները կրակով այրած են:» Հայ ազգը թէ՛ բնազդով, թէ՛ մտքին առաջնորդութեամբ կը փափաքի մասնակցիլ երկրին վարչութեան, բայց կ'ուզէ որ այս մասնակցութիւնը բարոյական հիմքու վրայ հաստատուի: Օտեան այդ մտատիպարը ստեղծեց, ուստի

և ազգին համար իտէական մարդը կղաւ:

Օտեան իբր քաղաքագէտ մարդ միշտ հակառակ հասցիսացաւ և Ռուսիոյ ազդեցութեան, որմէն կը վախնար թէ՛ օսմանեան պետութեան քայքայումը, թէ՛ Հայութեան փճացումը: Հիմակուան հայ սերունդն ալ Հայաստանի թշնամին Ռուսը համարելով՝ բնականաբար կը յարդէ ու կը մեծարէ յիշատակը հայ քաղաքագէտին սրուն աւանդութեանցը հաւատարիմ կը մնայ:

Բարեկարգեալ թիւրքիա մը միայն պիտի կրնար հարուածել Ռուսիոյ արեւելեան քաղաքականութիւնը, եւ Օտեան օսմանեան սահմանադրութեան մը մէջ կը տեսնէր թիւրքիան բարեկարգելու միակ հնարաւորութիւնը, ուստի եւ Միտհատ փաշային հզօր աջակիցը եղաւ: Անշուշտ այդ սահմանադրութիւնը, որ Միտհատեան կը կոչուի, մեզի չի կրնար զոհացնել մեր այժմու ըմբռնումով. բայց Օտեան որ իր միջավայրը լաւ կը ճանչնար, ինչ որ հնար էր լաւագոյն ընել՝ անոր յաջողութեանը կը մասնակցէր: Կը հաւատար թէ հայ տարրը հակառակ իր փոքրամասնութեան պիտի կրնար օսմանեան ազգային ժողովին մէջ ազդեցիկ դեր կատարել. ու փորձով իսկ տեսանք թէ հայ երեսփոխանները թէ՛ պերճախօս ատենաբաններ եղան հոն եւ թէ՛ ճարպիկ վարիչներ:

Պերլին հայ պատգամաւորութեան մը առաջուրը Ներսէս պատրիարքին ու Օտեանին գործն եղաւ: Այդ առաջուրին համար կատարուած խորհրդակցութեանց մէջ մեծ բաժին ունեցան ուրիշ հայ էֆէնտիններ ալ որոնք անշահահինդիւր ազգասիրութեան համբաւ մը երբեք չը վայելեցին: Գաղտնիք մը կը մնայ թէ Դրան հայ պաշտօնեաներ ինչպէս կրցին ակնբերել կերպով ձեռնարկնել ընել անկախ Հայաստան մը ստեղծելու համար: Օտեան որքան որ ալ ազգասէր եւ Միտհատ փաշային վրայ ազդեցիկ, բայց եւ այնպէս իրեն ներքի չէր բացարձակ կերպով պաշտպանել ծրագիր մը որուն կը թշնամանար կառավարութիւնը: Այս խնդրին վրայ ուրիշ առթիւ այս էջերուն մէջ խօսուած է, ուստի երկարելը աւելորդ կը սկսէմ: Կրնանք ընդունիլ թէ Ներսէս պատրիարք ՍանՍթեֆանօ զիմելով Հայաստանի համար ձեռք չբերաւ այն առաւելութիւնները զոր կը յուսար: Հայոց պատրիարքին Ռուսերու զիմումը՝ Հայաստանի վրայ Ռուսիոյ տիրապետութիւնը զիրացնելու պատրուակ մը հայթայթել էր. ու կրնանք ենթադրել թէ գառնապէս զղջացած էր վերջէն: Օտեան լաւագոյն կը համարէր Հայաստանը թիւրք իշխանութեան ներքե պահել, որով երբեք չկորսնցնել պագայի մը յոյսը, քան թէ բարեկարգելու պատրուակաւ վերջնապէս ուսացնել հայրենիքը: Հաւանական է նաև որ Կիպրոսի գաշնագրին նախապատրաստութեանցը տեղեակ ըլլար, և լուրջ բարեկարգութիւններ սպասէր Հայաստանի համար անգլիական ապագայ հովանաւորութեան մը, հետեւաբար Հայ ազգին համար օգտակար համարէր 16րդ յօդուածին ջնջումը: Ամէն պարագայի մէջ, Օտեան, իբր փորձ քաղաքագէտ մարդ, անշուշտ չէր կրնար զրական կերպով մտքէն անցընել թէ Պե-

տութեանց պարզապէս ծրագիր մը ներկայացնելով կա-  
րելի էր ինքնավար Հայաստան մը ստեղծել: Անշուշտ  
թիւրք նախարարներն ալ այս համոզումը ունէին, ուստի  
ամէն դիւրութիւն ընծայեցին պատգամաւորութեան ա-  
ռաքումին, մինչեւ իսկ ծածկագիր հեռագրի արտօնու-  
թիւնը տալով:

Ու յետոյ, ո՞վ դիտէ: Օտեան ալ բանաստեղծ էր, ե-  
րազանքի մարդն էր, իր ազգին արտադրութիւնն էր: Ներ-  
սէսի ու իրեն սրտեղնուն առջեւ «թերեւ» մը չնեղեալ-  
յացաւ: Ինչ կը պահէր Անժանօթը: Անժանօթը չէ՞ որ  
շատ անգամ կը վճռէ ազգերուն ապագան:

Միտհատեան սահմանադրութենէն մինչեւ Պերլին,  
Օտեանին, ինչպէս եւ Ներսէսին, հայկական քաղաքա-  
կանութիւնը խառնուրդ մը եղաւ սղջմտութեան ու ինք-  
նախարէութեան, իրականին դիտակցութեան եւ երա-  
զանքին: Հայ ժողովուրդն ալ քսան տարի է իր քաղա-  
քական ուղղութեանը մէջ ճիշդ ու ճիշդ Ներսէսի մը,  
Օտեանի մը հետեող եղաւ, եւ կը շարունակէ ըլլալ: Եւ  
ահա ինչո՞ւ այդ երկու անձնաւորութիւնները և որոնց Հայ  
ազգին ապագային վրայ մեծապէս աղղեցին, որոնք քա-  
ղաքական ուղղութիւնը ո՞ր և է զրական բարիք շարտա-  
դրեց հայ ազգին, գոնէ մինչև այսօր, բայց եւ այնպէս  
սիրելի ու ժողովրդական կը մնան: Հայոց քաղաքական  
մտքին մարմնացումը եղան. ու շատ անգամ աւելի ի-  
րենց սրտէն առաջնորդուեցան քան մտքէն:

Ա. Ա.

ՀԱՄԻՍԼԱՄՈՒԹԻՒՆ

ԵՒ

ԻՍԼԱՄԱԿԱՆ ԲՐՈՒԿԱԿԱՆՏԱ

Պուխարայէն էր որ Նաքչէպէնտիաներու համախոհ  
Սուլթան Պապէր՝ ԺԶ գարուն հիւսիսային Հնդկաստա-  
նի յաջող արշաւանքը ըրաւ ու հիմնեց Տէլհի իսլա-  
մական կայսրութիւնը: Մոնկոլ աշխարհակալին հետե-  
ւորդներուն խօսած արար, թիւրք և պարսիկ լեզուներուն  
և երկրին բնիկ գաւառաբարբառին խառնուրդէն ծնած է  
Ուրտուի բարբառը որ այսօր Հնդկաստանի կէս պաշտօ-  
նական լեզուն է և զոր ութսուններկու միլիոն բնակիչ կը  
խօսին, ու միայն Բէնճապի մէջ այդ լեզուով կը հրա-  
տարակուի ութսուններեք լրագիր: Հնդկաստանի մահ-  
մետական բնակիչներուն թիւը յիսունըօթը միլիոն կը  
հաշուուի: Բէնճապի մէջ բնակիչներուն 100ին 55ը կը  
ներկայացնեն, Սինտի մէջ՝ 100ին 77ը և Քաշմիրի մէջ՝  
100ին 70ը: Իրենց ծագման համեմատ կարելի է երեք  
կարգի բաժնել. Հիւսիս-Արեւմտեան գաղթողները որոնք  
Հինտուսթանի և Տէխասի մէջ հաստատուած են ու խառ-

նուած երկրին բնիկ տարրերուն հետ. Արաբական ծո-  
վէն ու Պարսկաստանէն եկող զաղթականները որոնք  
մինչեւ այսօր Մալապարի եզերքը կը բնակին. և վեր-  
ջապէս մահմետականութիւնը ընդունած բնիկները: Ինչ-  
պէս արդէն ուրիշ տեղեր, Հնդկաստանի մէջ ալ իսլա-  
մութիւնը իր նախնական յաջողութիւնը պարտական է  
սուրին ու հիմնած պետութիւններուն քաղաքական ազդե-  
ցութեանը: Այսուհանդերձ երբ ԺԸ. գարուն իր զօրու-  
թիւնը տկարացաւ, իր տարածման ուժը ո՞ր եւ է դադա-  
րում չկրեց: Մինչդեռ Օրանդի կամ Թիբու սուլթանի  
մը բռնի հաւատափոխութիւնները թող նորադարձներ կու-  
տային իրեն՝ որոնք կէս մը կը պահէին իրենց բազմաստ-  
ուածեան աւանդութիւնները, այսօր իսլամութիւնը մի-  
այն համոզման ուժովը ամէն օր նորանոր աշակերտներ  
կը գտնէ: Հոս է որ իսլամութեան ուսմակաւորական ու  
միաստուածեան յղացումը կը յաղթէ պահմանութեան  
բազմաստուածեան ու ազնուապետական յղացումին: Այն  
արհամարհանքը և խոհարհ վիճակը զոր ստորին կարգե-  
րու պատկանող Հնդիկները կը կրեն իրենց կրօնակիցնե-  
րուն կողմէ, իրենց ցոյց կուտան մահմետականութիւնը  
իրբ աւելի մարդկային ու աւելի գեղեցիկ կրօնք մը որ  
կ'ընծայէ ընկերական հաւասարութիւն եւ ազատութեան  
ամէն իրաւունքները: Պէնկալի մէջ բաւքակ մանդիները,  
որոնց գործը եւ գասակարգը Հնդիկներու կողմէ արհա-  
մարհուած են, խմբովին կ'ընդունին իսլամութիւնը: Եւ  
այս շարժումը այսօրուան գործ չէ: Արդէն ԺԶ. գարուն  
ստորին գասակարգները իսլամութեան դիմած են, մինչ  
հնդկական կրօնքը իրեն կը քաշէր միայն ընկերութեան  
բարձրագոյն խաւերը:

Վերջին տասը տարիներուն մէջ, Հնդկաստանի իս-  
լամ բնակիչները երեք միլիոն աւելցած են: Նորադարձ-  
ներու թիւը տարին հինգ վեց հարիւր հազարի կը հաս-  
նի. որոշ թիւը գիտնալ անկարելի է, որովհետեւ իս-  
լամական քարոզչութիւնը որ և է կեդրոնական կազմա-  
կերպութիւն մը չունի: Իսլամական առաքելութիւնը կը  
կատարուի գաղտնի կերպով վաճառականներու և առհաս-  
տաւորներու ձեռքով և, ճամբաներու վրայ, ուխտաւորնե-  
րու եւ ֆաջիրներու միջոցաւ: Հաճի Մուհամմէտ անուն  
մէկը կը պարծի թէ երկու հարիւր հազար հնդիկ դար-  
ձուցած է մահմետականութեան. Պէնկալորցի մէլիկի  
մը քաղքին բնակիչներուն հազարը մահմետական ըրած  
է: Գեղ մը, որ ատենօք երիցական միսինարներու քա-  
րոզութեան կեդրոն եղած է, ամբողջովին իսլամութեան  
դարձած է մահմետական ֆաջիրի մը ձեռքով: Մահմե-  
տական բարձր կրօնաւորներ քրիստոնեայ միսինարնե-  
րու զրութեան կը հետևին: Պզտիկ տետրակներ կը բաժ-  
նեն ու ամբոխին առջեւ կը քարոզեն կա՛մ հրապարակ-  
ներու և կա՛մ շուկաներու մէջ: Մեծ քաղաքները, ինչ-  
պէս Կալկաթա, Պոմպէյ, Պէնկալոր, քարոզատեղիներ  
ունին, եւ նորերս իսլամութեան դարձողներուն մէջ նոյն-  
իսկ ստորին դասու Երոպացիներու անուններ կը տես-  
նուին:

Հոն ուր մահմետականութեան եւ պրահմանութեան նման տարբեր կրօնքներու կուսակիցներ ըլլ ըլլի կ'ապրին, բնական է որ յաճախ թշնամութիւններ ծագին: Շատ անգամ արիւնալի կեփներ առաջ եկած են մահմետականներու անհամբոյր բնութեան պատճառաւ: Անգլիական կառավարութիւնը, իր ազատական վարչութեան բարիքներուն վրայ վստահ, այս տեսակ վեպքերը բացարձակապէս լաւատես կերպով մը կը գտէ: Անգլիացի հեղինակներու կարծիքէն համեմատ, մահմետական մուսուլմանութիւնը մէկ քանի մեծ քաղաքներու մէջ միայն գոյութիւն ունի, մինչդեռ շինական ժողովուրդը բոլորովին հանդարտ է: Կառավարութիւնը Ուահապիդ կոչուած աղանդաւորներուն դէմ միայն խիստ կը վարուի, որովհետեւ զիտէ թէ այդ աղանդաւորները Հնդկի մահմետականներուն մոլեռանդութիւնը կ'արծարծեն: Թէեւ մեր այս ուսումնասիրութեան շրջանակէն դուրս է, սակայն կ'արժէ որ հաս յիշենք Հնդկի Ուահապիդները, մահմետականութեան հերձուածող աղանդաւորները, մասնաւորաբար երեսուն տարի է ի վեր Հնդկաստանի մէջ իրենց ի գործ դրած հաւատատարածութեան համար: Իսլամութեան այս մաքրակրօնները կը մերժեն Խորանի պաշտօնական միկնութիւնները, կը պահանջեն որ ամէն մարդ ուզածին պէս հասկնայ զայն, կը դատապարտեն սուրբերու պաշտամունքը, և, նախնական իսլամութեան ոգիին համաձայն, անհաւատներու դէմ սուրբ պատերազմը իբրև հաւատքի մաս կ'ընդունին:

Իրենց վարդապետութեան մուսքը Հնդկաստանի մէջ, 1820ին, մեծ ապստամբութեան մը նշանը եղաւ: Ուահապիդները ամբողջ Հնդկաստանը «տար էլ հարպ» յայտարարեցին, այսինքն «անհաւատներու յրկիր», եւ ամէն կողմ սուրբ կոխը սկսան քարոզել: Քառասուն տարուան մարտնչումէ ետքը, միայն 1868ին, անգլիական կառավարութիւնը կրցաւ զսպել զանոնք: Այդ թըւականէն ի վեր, այդ աղանդը, որ խիստ հսկողութեան ենթարկուած է, գոհ կ'ըլլայ միայն յաշող բոքրականտա մը ընելով Հնդկաստանի բազմաթիւ կէս-իսլամ աղանդներուն մէջ: Ուզղափառ մահմետականներու նկատմամբ Ուահապիդները զրիթէ թշնամական դիրք մը ունին: Մահմետական ընկերակցութիւններն ալ, իրենց կողմէ, կասկածանքով կը վարուին Ուահապիդներուն հետ, թէեւ անոնց հակաքրիստոնէական վարդապետութիւնները համաձայն են իրենց համոզումներուն:

Հնդկաստանի մէջ մասնաւորապէս կը գտնուին Քատրիաներու, Շատկիաներու և Նաքշէպէնիներու հետեւորդներ որոնք բազմաթիւ կապերով միացած են իրենց կեդրոնական Ասիոյ, Արաբիայի, Եգիպտոսի և Մաղղպի եղբայրներուն:

Հնդկաստանի, Ափրիկէի, ինչպէս Թիւրքիայի մէջ, իսլամական լրագիրներու և հանդէսներու յարածուն թիւը հիանալի օժանդակութիւն մը կ'ըլլայ ամէն երկրի մահմետականներու միջեւ համերաշխութեան ոգիին զարգացման և միութենական զաղափարին տարածման հա-

մար: 1884ին, Խարթումի դրաման ատեն, Անգլիա խոհեմութիւն համարեց կարմիր ծովու նաւահանգիստները պաշարել: Բրիտանական կայսրութիւնը այս միջոցը գործածեց որպէս զի Սուտանի մէջ իր բանակին կրած պարտութեան լուրը մինչեւ Հնդկաստան չհասնի: Բայց անօգուտ եղաւ: Փոքրիկ թերթ մը, «Ապու Նատարա» անուն, որ այն ատեն կը հրատարակուէր Գահիրէի մէջ և որ Մահտի բանակին յաղթութիւնները կը պանծացնէր, հակառակ ի գործ դրուած հսկողութեան՝ հազարաւոր օրինակներով Հնդկաստան զրկուեցաւ: Հընդկաստանի փոխարքան նկատի առաւ այդ թերթին ընթերցումէն յառաջ գալիք վտանգները, և, ինչպէս կը կարծուի, անմիջապէս նոր զօրք խնդրեց մայր-հայրենիքէն:

\* \* \*

Եթէ կեդրոնական Ասիոյ և Հնդկաստանի մէջ մահմետական բնակիչները կարող են օր մը եւրոպական երկու մեծ պետութիւններու նմարը այս կամ այն կողմը հակիլ տալ, իսլամութիւնը ոչ նուազ գործօն դեր մը խաղալու կոչուած է Եւրոպայոյն Արեւելքի մէջ պատրաստուող յեղաշրջումներուն մէջ:

Գարեթէ ի վեր իսլամութիւնը խորին արմատներ ձգած է Չինաստան: Արաբացի ճամբորդներն են որ առաջին անգամ ճանչցուցած են շինական քաղաքները, արաբացի վաճառականներն են որ նոյնպէս առաջին անգամ շինական արուեստի արդիւնքները ճանչցուցած են: Իսլամութիւնը կեդրոնական Ասիայէն գալով, ութերորդ դարուն մտած է Չինաստան չորս հազար արաբ զօրքերու միջոցաւ, զորոնք Ապու Տափար խալիֆան զըրկած է Սու-Յանկ կայսեր, օժանդակելու համար ասոր որ ապստամբական շարժումի մը դէմ կը կռուէր: Ճինկիզ խանի ատեն մահմետականութիւնը աւելի արմատացած է Չինաստան բազմաթիւ եկտրներու ձեռքով: Մինչեւ ԺՁ. դարը մահմետականութիւնը Չինաստանի մէջ կազմած էր հասարակութիւններ սրոնց անգամները իբր օտարական կը նկատուէին: Այսուհանդերձ այդ թուականէն ետքը, իսլամութիւնը բազմաթիւ իրաւունք ստացաւ: Այս իրաւունքը ս'չմիայն շինացի մահմետականին ընկերական բացարձակ հաւասարութիւն մը կուտայ, այլ նաև անոր առջեւ կը բանայ ամէնէն բարձր պաշտօններու ասպարէզը (1): Շատ զարմանալի երեւոյթ մըն է արդարեւ պատմութեան մէջ, միջին դարէն ի վեր ցոյց տրուած այս կրօնական թոյլտուութիւնը Չինաստանի մէջ, որ ասիական ամէնէն բացարձակ պահպանողականութեան երկիրն է:

(1) ԺԷ դարուն Մամոթօ անուն մահմետական մը, Մարզարէին սերունդէն, Քաշմարի թագաւոր եղաւ եւ գահը ձգեց իր ժառանգներուն, որոնք երկու հարիւր տարի իշխեցին:

Չինական տարեգրքները, որոնք յաճախ կը յիշեն մահմետական առաքելութեան մը գէպըը, ապացոյց մըն են թէ միայն իսլամ եկեղծները չեն որ մահմետականութիւնը տարածած են Չինաստան: Ճշմարիտ բրորական տա մը այդ բանին նպաստած է ընդարձակ սահմանի մը մէջ: Անխօսուի գործելով, բրորականտան ամէն տարի անթիւ հաւատացեալներ կ'որոսայ: Մահմետականը որ ի բնէ միսիոնար մըն է, առիթ չի փակցնէր՝ Չինաստանի մէջ՝ հոգիներ շահելու: Այս նպատակով է որ, զարէ մը ի վեր, մեծ աղէտներու ժամանակ, առանց ապրուստի մնացած ընտանիքներու տղաք ծախու կ'առնէ ու Մարգարէին կրօնքին մէջ կը մեծցնէ: Սովի մը ատեն, այդ կերպով հաւաքուած տղոց թիւը տասը հազարի հասած է:

Ասկէ քառասուն տարի առաջ, Եւրոպայի մէջ, չինացի մահմետականներու մասին ծանօթութիւն ունէին միայն միսիոնարներու և զիանաղէտներու միջոցաւ: Թայբինի ապստամբութեան ժամանակ միայն Եւրոպայի ուշադրութիւնը դարձաւ զէպի այն վտանգներուն վրայ զորոնք կրնային առաջ բերել Չինաստանի մահմետականները, իրենց կոյր ու խանդավառ մտնանդութեամբը: Ապստամբական ահեղ շարժումներ կարող եղան տարիներով զիմադրելու չինական կառավարութեան: Մասնաւորաբար Թայբինի ապստամբութեան ատեն, Մայրաքոյն—Արեւելքի իսլամները տասնըինը տարի կուսեցան կառավարութեան դէմ:

Մոնկոլեան արիւն կրող մահմետականները ցեղով, լեզուով ու բարքերով շատ տարբեր են սեմական մահմետականներէն. այսուհանդերձ լոկ կրօնական միութիւնը բաւական եղաւ Չինաստանի և Արեւելքի մահմետականներուն միջև համերաշխութիւն մը հաստատելու: Այս զգացումը Չինաստանի մէջ կը տեսնուի այն մասնաւոր յարգանքով զոր չինացի մահմետականը ունի Արաբիոյ սուրբ տեղերուն նկատմամբ:

**ՏԸԲՈՆ ԵՒ ՏԷԲԱՐԴ**

(Մնացեալը յաջորդով)

**Ժ Ա Մ Ա Ն Ց**

**ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԹԻՒՆԸ ՀԱՅ ԼԵԶՈՒԻՆ ՄԷՉ**

Ժրնիվ, 2 յուլիուս 1900

Սիրելի բարեկամ,

Կը հաշտեմ թէ ի՞նչ կ'ընեմ ժրնիվի մէջ. շաբաթ մը առաջ պիտի չկրնայի պատասխան մը տալ այդ հար-

ցումիդ, իսկ հիմա կրնամ ըսել. «Յեղափոխական թերթի մը մէջ խմբագրութիւն կ'ընեմ:»

Հոս հասնելէս քանի մը օր ետքը իմացայ որ մեր ժրնիվցի յեղափոխականները պէտք ունին օգնական խմբագրի մը և ներկայացայ իրենց զբասնեակը... կը ներես՝ իրենց բիւրօն, իբրեւ այդ պաշտօնին թեկնածու... նորէն սխալեցայ՝ իբր կանտիտուդ:

Սիրալիր ընդունելութիւն մը գտայ. միայն թէ ըսին ինձի որ փորձի համար բան մը գրեմ եւ տանիմ իրենց:

—Մի ինտանդի էր պան...

Նոյն իրիկունն իսկ յօգուած մը գրեցի սա սկզբնաւորութեամբ:

«Ազատութիւնը ձեռք կը բերուի արեան գնով և ո՛չ թէ զիւանազիտական միջոցներով: Այժմ հայկական յեղափոխութիւնընոր շրջանի մը մէջ մտած է, եւ կեղծ բարենորոգումներով չէ որ պիտի գոհանանք՝ Հայաստանը աւերող ահռելի աղէտքին հանդիսատես ըլլալէ ետքը: Ազատութիւն կամ մահ. այս պէտք է ըլլայ մեր նշանաբանը: Իրաւ է որ ժողովուրդը կը սկսի խոյս տալ մենէ և պահպանողական ընդդիմադիր կուսակցութիւնը ձայն կը բարձրացնէ, մանաւանդ մտերիմ շրջանակներու մէջ, և իմաստակ տրամաբանութեամբ յեղաշրջում մը առաջ կը բերել կը փորձէ, մեր պաշտօնին ազդեցութիւնը կտարելով. սակայն իր այդ մեքենայութիւնը կարելի է չէղբացնել մեր կարողութիւնները մէկտեղ հաւաքելով եւ վարպետ գործունէութեամբ մը այդ աղետալի ընդդիմութեան ընթացքը կասեցնելով, և այն:»

—Լաւ է, պատասխանեցին յօգուածս կարգալէ ետքը, կազապարները վատ չեն, միայն դա հոս հոսի լեզու է, պէտք է կրել յեղափոխական լեզուով...

Յետոյ իրենց թերթէն քանի մը օրինակ տուին որ պէս զի յեղափոխական լեզուն ուսումնասիրեմ եւ անոր համեմատ գրեմ:

Միւս օրը նոյն յօգուածս տարի հետեւեալ ժրնէւ վական հայերէնին վերածած:

«Ազատութիւնը ձեռք կը բերուի արեան գնով եւ ո՛չ զիպլօմատիկական միջոցով: Այժմ հայկական հարցը մտել է մի նոր ֆազիոնի մէջ և ֆիկտիւ ռէֆօրմներով չը պէտք է գոհանանք, Հայաստանը աւերող ահռելի կատաստրօֆային սպէկտատորները լինելուց ետք: Ազատութիւն կամ մահ. այս պէտք է լինի մեր գէվիզը: Ճշմարիտ է որ մասսան խոյս է տալիս մեղանից և կոնսերվատոր օպպօզիցիան ձայն բարձրացնում է, մանաւանդ ինտիմ սէրկիւնքի մէջ եւ պէզանտ լօզիկայով փորձում է մի բէակցիա առաջ բերել ու մեր միսիայի պրէստիժը կտարել, բայց իր այդ մանէօլը կարելի է իզուարել մեր ֆակուլտէները մէկտեղ հաւաքելով եւ տակտիկական գործունէութեամբ կասեցնելով այդ նէֆաստ օպպօզիցիայի պրօէկտը, և այն:»

Երբ պարոնը՝ որ բարձրաձայն յօգուածս կը կարգար հասաւ «նէֆաստ օպպօզիցիայի պրօէկտը» բառերուն, ա՛լ չկրցայ իր հիացումը զսպել եւ ամէն կողմէ կօմպլիմէնտ...

ներ սկսան տեղալ գլխիս:

Ահա՛ թէ ինչպէս յեղափոխական թերթի մը բեզակ-տոր դառայ:

Յօդուածս փետրուարի թիւին մէջ պիտի երեւայ իբր առաջնորդող...

Առ այժմ մնաս բարով. ցը...

ԿԱՅԾԱԿ ՌՄԲՈՒՆԻ

Ընդօրինակեց

ԵՐՕՏ

ԷՏԿԱՐ ՇԱՀԻՆ

Բարիդի Լա Ռիվիէ տ'Աս գեղարուեստական հան-դէսը իր 1900 յունուար 13ի թիւին մէջ Պ. Լէոն-Տա-վիտի մէկ հոյակապ յօդուածը նուիրած է երիտասարդ հայ նկարիչ Պ. Էտկար Շահինի դործին:

Պ. Շահին այն արուեստագէտն է որ, չորս տարիէ ի վեր իբր նկարիչ Բարիդի մէջ իրեն պատուաբեր ա-նուն մը շինելէ յետոյ, այսօր միանգամայն իբր փո-րագրիչ՝ առաջնակարգ վարպետի համբաւ մը ստանա-լու վրայ է:

Պ. Լէոն Տավիտ կը բացատրէ թէ ինչպէս Պ. Շահին, երբ վեց տարի առաջ Վենետիկէն Բարիդ եկաւ հաստատ-ուելու, գիտցաւ մեծ քաղաքին մթնոլորտովը թրծուիլ, և թէ ինչպէս հիմակ հետզհետէ իր բռնակնդ-սեղներուն մէջ այտայայտելու վրայ է բարիդեան ամբօրին «խը-ռովքն ու խորհուրդը»: «Պէտք էր ընդգրկել անհուն ամ-բօրը, ցաւը և ուրախութիւնը, համակերպող անտարբե-րութիւնը և դժնէ ոգորումը, թաղերը և իրենց բազմա-պատիկ կերպարանքները, վաճառանոցները, անոնց կա-նանչ կաղամբի լեռնադէզ կուտակումները և խոշոր քահ-քահները, և ապարանքի կառքերը որոնք հեռուն կ'անց-նին կը սուրան՝ երկվարներուն սանձի շղթաներուն խժըլ-դուքովը որոնց վրայ մարը մտնող արեւը փողփողում-ներ կը ցրցենէ, դպրոցը, սէրը, մոլութիւնը, պայքարը, միտքը, ոյժը, ճոխութիւնը եւ թշուառութիւնը եւ էակ-ներուն ընդգրկմամարտութեան իրարանցումը: Այդ իտէալը զինքը վառեց բեղմնատր խանդերու հուրքով մը զոր հա-զիւ կը սկսի յագեցնել:»

Չզարմանանք թէ ինչպէս Հայ մըն է որ կարող կ'ըլ-լայ արտայայտել այդ ամէնը: Սովորութիւնը կը բթա-ցընէ զգայնութիւնը, մինչդեռ Պ. Շահինի իմացականու-թիւնը կ'արծարծուէր բոլոր այս նորանշան համայնա-պատկերին առջև: Վենետիկի մէջ, սքանչացմամբ ու սուսմասիրած էր թիէթրոյի փորագրութիւնները, ու գա-ղափարը ունեցաւ պղնձի վրայ շարունակելու իր ար-ուեստը, որով պիտի կրնար աւելի շուտ իրականացնել իր տեսիլքները և ուզածին չափ օրինակ հանել անոնցմէ: Անկից ի վեր, տենդոտ գործունէութիւն մը սկսած է, եւ

տարիներու ընթացքին մէջ Պ. Շահին արտադրած պի-տի ըլլայ անհուն ալպոմներ «որոնք պիտի բուսնանա-կեն Բարիդի և Լոնտոնի ամբողջ կեանքը, Արևելքի յի-շատականեր, քաղեղներ և ցնցոտիներ, փարթաժութիւններ, ոգորումներ, յաղթահարուած տախտապատումներ, գերա-գոյն վայելչութիւններ՝ մոլութիւններու վրայ, և խառնի-խուսն՝ անթութիւն, վայրենի դիտութիւն, համակեր-պութիւն և անբանի բուն: Այդ քսանհինգ տարեկան փորագրիչը, որ հազիւ տարի մըն է փայլայեց իր առա-ջին պղինձը, արդէն 32 կտոր արտադրած է, որոնց մէջ հոյակապ գործեր կը գտնուին:»

Լա Ռիվիէ տը ՚Առ անոնց գլխաւորներուն պատկեր-ները կը հրատարակէ, և յօդուածագիրը կը մանրամասնէ անոնց յատուկ գեղեցկութիւնը: Պ. Շահին մասնաւորա-պէս նկարած է խեղճերը, մեծ բարութեամբ մը բոլոր այդ էակներուն համար զորոնք կեանքը կը ճզմէ: «Բայց, որչափ տառապանքին նկարիչը, Պ. Շահին ճշմարիտ վա-յելչութեանց նկարիչն է, այն վայելչութեանց որոնք գե-ղեցկագիտական շնորհի բարձրութեան կը հասնին, կնոջ նկարիչը՝ անոր ամէնէն յանկուցիչ ու ամէնէն կնճաս արտայայտութեանը մէջ, Բարիդուհինի նկարիչը, — ո-գելից աչք՝ տմայն գէմքերու վրայ, աղիճի յորդ ժպիտ, աշխարհիկ կիներու անխախտ ժպիտ, հասակի շնորհալի ձիգ ու պիւրկ անշարժութիւններ և առեղծուածային վէտ-վէտումներ, խոստմնալից աչք ու կոյսի գէմք, կոյսի գէմք ու կնկան մարմին, լիալիբ կուրճքեր, շատ լայն բարձ-քեր, միամիտ յօնքեր, դարձացկոտ աչքեր, ինք կը զար-դարէ զայն իր բոլոր շնորհովը ու իր բոլոր երկդիմու-թեամբը: Համակերպած աղջիկէն որուն արտաբերու-թիւնը կը բռնէ տղու կառքերու թեթեւ բեռը, մայրերուն աղիճէն մինչև շիք գինետուններուն կիներ որուն կրկնօցը տախտակամածին փոշիներուն մէջէն կ'երկարաձգուի ար-քայական ծալքով մը, մինչև կառքերուն կիներ որուն բարեւ ժպիտ մըն է, ան կ'երթայ հետապնդելով տիպարին, ա-նոր հետեւելով իր վիճակափոխութեանցը մէջ և միշտ զանի նոյն երեւան բերելով: Նրբացումներուն զիմակին տակ՝ յաւիտենական կիսն է որ կը փնտռէ ան, գէպի ո-րուն կը ձգտի, որուն թովչութիւնը կը կրէ և զոր նախա-սիրաբար կը նկարէ:»

Որչափ կը յիշենք առաջին անգամն է որ հայ արուես-տագէտի մը ամբողջ գործը այսպիսի ընդարձակ գնա-հատման մը առարկայ կը դառնայ բարիդեան մամուլին մէջ, եւ ասիկա ստոյգ նշան մըն է այն աւելի մեծ յաջո-ղութեանց որոնք կը սպասեն մեր երիտասարդ տաղանդա-ւոր բարեկամին: Լոնտոնի «Նկարիչներու և Փորագրիչ-ներու արքայական ընկերութիւնը» այս օրերս զինքը իրեն անդամ ընտրեց, և մարտ 26էն ապրիլ 7 Պ. Շահինի գործերը ի տես պիտի դրուին Լոնտոն՝ «Գեղարուեստ-ներու ընկերութեան» կողմէ, ու տարակոյս չունինք որ անգլիական սօսանին քննադատները ու արուեստասէր-ները պիտի վաւերացնեն իրենց Բարիդի պաշտօնակից-ներուն այնքան համակիր վճիռը:

### ԹԻՒՐԵՒՈՅ ՉՈՐՍ ԿՈՂՄԸ

Անգլիական հանդէս մը վերջերս մէջտեղ կը դնէր սա նոր ճշմարտութիւնը թէ այն տկար ու պզտիկ պետութիւնները որոնք օտար երկրէ փոխառութիւններ կը կնքեն, իրենց ազատութիւնն ու ինքնօրինութիւնն է որ ի փոխարէն զրաւի կը դնեն: Արդարեւ, ինչպէս մէկէ աւելի օրինակներ ցոյց տուին մինչեւ հիմակ, երբ օտար փոխատուն կը տեսնէ թէ իր շահերը վտանգուած են այն երկրին մէջ ուր իր դրամը կը գործածուի, կը դիմէ իր կառավարութեան՝ անոր պաշտպանութիւնը հայցելով, ու ան ալ ստիպուած է միջամտելու՝ իր հպատակներուն իրաւունքները անկորուստ պահելու համար: Միաջմտութեանն թեւարկութիւն քայլ մը կայ միայն, որուն աստիճանաբար կը յաջորդեն աւելի ազդու եւ հիմնական միջոցներ:

Հիմակ կարգը Պարսկաստանի եկած է այդ ճամբուն մէջ մտնելու: Ու Ռուսիան որ անոր կը դիւրացնէ առաջին քայլերը: Բեղրպուրկէն յունուար 30 թուականով կէս պաշտօնապէս կը ծանուցուի թէ ուս կառավարութիւնը, «Պարսկաստանի Շահին կառավարութեան խնդրանքին վրայ, և ի նկատ առնելով երկու կառավարութեանց միջև միշտ գոյութիւն ունեցած բարեք յարաբերութիւնները», թող տուած է Պարսկաստանի ուսական փոխատուութեան պանքային որ 22,500,000 ռուպլիի (2 ու կէս միլիոն անգլ. ոսկի) փոխատուութիւն մը ընէ Պարսկաստանի, հարիւրին 5 տոկոսով: Պարսկաստանի բոլոր երաշխաւորութիւն կուտայ իր մաքսատանց հասոյթները: Այդ հասոյթները պէտք եղածէն աւելի են ապահովելու համար տոկոսին և զլիսավճարին (75 տարուան մէջ) համար հարկ եղած գումարը: «Բայց եթէ այդ վճարումները յապաղին, փոխատու պանքան իրաւունք պիտի ունենայ հսկողութիւն ի գործ դնելու մաքսատանց վրայ:»

Ռուսիա ահա անտեսապէս ձեռք կը դնէ Պարսկաստանի վրայ: Ինչպէս անգլիական լրագիրները ցաւով դիտել կուտան, ոչինչ աւելի դիւրին պիտի ըլլայ հիմակ Ռուսիոյ՝ քան եթէ ուզած ատենը խնդր մը հանել իր փոխատուութեան հատուցմանը մասին, ու ձեռք առնել երկրին անտեսական վարչութիւնը, որ սկիզբ մը պիտի ըլլայ միջամտութեան նորանոր առիթներու:

Այն հանդարտ ու ամուր յառաջխաղացութեամբ, որ ուսական քաղաքականութեան ոլթն ու արժանիքը կը կազմէ, Ռուսիա հիւսիսէն կը տարածուի դէպի հարաւ: Ու իր մեծ ակոյեանը այսօր ոտքով ձեռքով այնքան կաշկանդուած է հարաւային Ափրիկէի պատերազմովը, որ անբողոք կ'արձանագրէ Ռուսիոյ այս նոր եւ ուժեղ քայլը պէպի Պարսից ծոցը:

\* \* \*

Թիւրքիոյ վրայ ալ Ռուսիա մինչեւ հիմա զլիսաւորապէս կ'ազդէ իր առնելիքներուն կրթմամբ: Պատերազմական տուգանքը զոր Թիւրքիա կը պարտի իրեն, յարմար զէնք մըն է զոր Ռուսիա միշտ մէջտեղ կը հանէ՝ ամէն անգամ որ Թիւրքը իր ջուրին բերել կ'ուզէ: Անցեալ տարի սակայն, առաջին անգամն եղաւ որ Թիւրքիա կրցաւ իր տարեկան բաժինը ամբողջովին վճարել, և ասիկա այնպիսի նորանշան երեւոյթ մըն է որ եւրոպական մամուլը ապշուածեամբ կ'արձանագրէ զայն:

Մեր ընթերցողները զիտեն թէ այդ պատերազմական տուգանքին ընդհանուր գումարն է 35 միլիոն օսմ. ոսկի, զոր Թիւրքիա յանձն առած է վճարել 100 տարիէն, տարեկան 350,000 ոսկիի հաշուով: Արդ, ուսեթիւրք պատերազմէն ի վեր՝ 1899ին առաջին անգամն էր որ Թիւրքիոյ գանձը որոշեալ ժամանակին վճարեց 350,000 ոսկին ամբողջովին: Հակառակ Ռուսիոյ դեպանատան երկիւղին թէ՛ ելմտական նախարարութիւնը պատերազմական տուգանքին յատկացուած հասոյթներուն մէկ մասը իւրացուցած ըլլալուն պատճառաւ՝ վճարուած կիսկատար պիտի մնայ, ելմտական նախարարը զեկտեմբեր 30ին Օսմ. Պանքային յանձնեց 35,000 ոսկի որ 1899ի հաշուին մնացորդը կը ներկայացնէր: Գրեթէ միևնոյն ատեն, Թիւրքիոյ գանձը 34,000 ոսկի վճարեց Գերմանիա ապսպրած Մազէրեան վեց միլիոն փամբուլչի հաշուոյն:

Վճարումներու այս կանոնաւորութիւնը այնքան զարմանք պատճառեց որ ոչ մէկուն հաւատալը չէր ի գար, մինչեւ որ գաղանիքը պարզուեցաւ, — տխուր գաղանիք մը՝ որ նոր ապացոյց մըն է այն վատթար վարչութեան որ երկրին ելումուտը կործանելու վրայ է:

Այդ գումարները ձեռք բերուած էին փոքր մասամբ մը տասանորդի յետեւալ տուրքերէ, և մեծ մասամբ ալ Արքունի Նաւարանին մէջ զիջուած մէկ քանի հարիւր հազար թօնօ հին երկաթի վաճառումէ՝ զոր առևտրական տուն մը ամէնը մէկէն 50,000 ոսկիի գնած է: Կայսրութիւն մը որ հին երկաթեղէններ ծախելով զրամ կը ճարէ, արդէն ասիկա խկապէս Թիւրքիոյ յատկանիշն է: Բայց աւելի ծանր կէտը հոն է որ Արքունի Նաւարանը հարկ եղած բոլոր սարոյքը եւ մեքենաները ունի՝ հին երկաթը նորէն թափելու, և սակայն դանիկ վար գնով ձեռքէ կը հանէ՝ տէրութեան առօրեայ պէտքերուն համար, մինչդեռ հիմակ ստիպուած է՝ Նաւարանին պէտքերուն համար՝ Եւրոպայէն նոր երկաթ գնել, կրկնապատիկ գին վճարելով:

\* \* \*

Աշխարհ զիտէ այսօր Թիւրքիոյ այդ կացութիւնը՝ Ապտիւ Համիտի անխոնջ ու անվհատ ջանքերուն շնորհիւ: Ու ահա նորէն Տամատ Մահմուտ փաշա բոլոր Եւրոպայի կ'իմացնէ թէ իր երկրին կործանման միակ պատճառն է սուլթանը: Իր սիրանոյ շաներձագին ճանկերէն

ագատեղեն ի վեր, Մահմուտ փաշա բաւական դործ տե  
թաւ՝ անգամ մը եւս մարդկութեան առջեւ պարզելով Ապ-  
տիւլ Համիտի վարչութեան բոլոր ամօթն ու արհաւիրքը:  
Սուլթանին ուղղած բաց նամակը, զոր ամբողջութեամբ  
կամ մասամբ գրեթէ բոլոր եւրոպական թերթերը հրա-  
տարակեցին, իր մէջը նորութիւն մը չի պարունակեր ան-  
շուշտ, բայց լու է որ այդ բաները կրկնուին, մանա-  
ւանդ այդպիսի հեղինակաւոր անձնաւորութեան մը բերնէն:

«Ո՞ր քաղաքակիրթ երկրին մէջ, կը գոչէ խեղճ փե-  
սան՝ զգածեալ շեշտով մը, ո՞ր քաղաքակիրթ երկրին մէջ՝  
ձեր կազմածին ու ընտրածին պէս կառավարութիւն մը կը  
գտնուի: Կարելի՞ է ժողովրդի մը բարօրութիւնը ապա-  
հալել այդպիսի տարբերով: Ու ձեր յամառ յարատեւու-  
թիւնը այդ ամուլ ճամբուն վրայ՝ ուրիշ Ի՞նչ հետեւանք  
կրնայ ունենալ եթէ ոչ մեր ազգին վերջնական քայքա-  
յումը: Իսկ ձեր վեհափառութիւնը, բռնաւոր ու եսա-  
ւեր վեհապետներու նման, իրեն առաջնորդ ընտրած  
Լուի ժե ի ամօթալի խօսքը. «Ինձմէ ետքը ջրհեղեղ:»  
Չեր անձէն զատ սրիշ բան չէք մտածեր. ամէն իրա-  
ւոյնք ու ամէն մարդասիրական զգացում ստնակոխ կ'ը-  
նէք: Բնաւ ձեր փոյթը չէ ձեր ժողովրդին երջանկու-  
թիւնը, ու 24 միլիոն հոգի ձեր եսասիրութեանը զոհ-  
ուած են:

«Հազարաւոր մարդկային էակ—մահմետական ու  
քրիստոնէայ — բնաջինջ եղան: Չեր հպատակները կը  
փախչին՝ ձեր բռնաւորութենէն ճողոպրելու համար: Եր-  
կիրը անմարդանալու վրայ է, հասոյթները ըստ այնմ կը  
նուազին, և դուք, հակառակ այս ամէնուն, ու կարծես  
իրր ճառթ մը, կը շարունակէք ձեր ժպիրհ ու անպատ-  
կառ պերճանքը: Յիմար գործեր ու շոյլ ծախքեր կ'ը-  
նէք, ինչպէս հաստատել աստիճաններ ու պատուանշան-  
ներ որոնք ուրիշ ոչ մէկ պետութեան մէջ տեսնուած են.  
500էն 2000 ոսկի ամսական հուտաք զող նախարար-  
ներու և զառամած մեծ—եպարքոսի մը, առանց ուշ գնե-  
ու թէ պետութեան հասոյթները տարեկան տասը միլիոն  
ոսկին չեն անցնիր:»

Մահմուտ փաշա կը յայտարարէ թէ թիւրքիայէն  
փախչելուն նպատակն է «ըւսաւորել ազգը, անոր բա-  
ցատրել արդի թիւրք զրութեան վտանգները, և զայն  
կերպարանափոխել:» Իր բաղձանքն է իր երկրին ծա-  
ռայել առանց ցեղի ու կրօնքի խտրութեան: Տեսնենք  
ինչպէս պիտի գործադրէ իր ծրագիրը, — որովհետեւ ան-  
շուշտ չի կարծեր թէ թիւրքիոյ վիճակը կրնայ երբեք  
փոխուիլ՝ Բարիզէն բարկաճայթ նամակներ գրելով սուլ-  
թանին և լրագիրներուն մէջ հրատարակելով զանոնք:



Յունուար 16ին—Բամազանի 13րդ օրը—Սուլթանը  
նորէն ահով զողով Ստամպուլ անցած է Խըրդայի Շէրֆի  
տօնին աթիւ: Բիւզերի թղթակիցը կենդանի դադափար  
մը կուտայ այդ անցքին վրայ: Ասկէ առաջ, կ'ըսէ, սուլ-  
թանը սովորաբար կ'առջով Ստամպուլ կ'երթար Ղալա-

թիայի կամ Բերայի ճամբով, ու նոյնպէս ցամաքէն ետ կը  
դառնար: Երբք եւ նոյն իսկ չորս ճամբայ կը պատրաս-  
տուէին իրեն համար, որովհետեւ յայտնի չէր թէ ո՞ր ճամ-  
բան պիտի ընտրէր: Շոգենաւ մըն ալ միշտ պատրաստ  
կը գտնուէր այն պարագային համար որ սուլթանը ուզէր  
ձովու ճամբան ընտրել. բայց, կ'ըսեն, հին գուշակու-  
թեան մը պատճառաւ թէ Ապտիւլ—Համիտ ջրի մէջ խեղ-  
զուելով պիտի մեռնի, երբեք չէր համարձակեր ձովէն երթալ:

«Երբք տարի առաջուան հայկական խռովութիւնները  
և մայրաքաղաքին մէջ ուժանակի սուսերու գործածու-  
թիւնը կ'երեայ թէ սուլթանը համոզած են որ ցամաքի  
վրայ վտանգը աւելի մեծ է քան ձովու վրայ, հակառակ  
գուշակութեանը, ու հետեւաբար երբք տարի է որ միշտ  
ձովու ճամբան կ'ընտրէր երթին ու գարձին: Նոյնպէս  
սովորութիւն ունէր իֆթարը թօփ—Պարուի պալատը ը-  
նելու՝ արեւուն մարը մանեղէն ետքը: Սակայն 1896էն  
ի վեր, երբ խոհարարները եւ ուտելիքները Երլտըզէն  
թօփ—Պարու տանող շոգեմակոյկը ընկղմեցաւ և հինգ հո-  
գի խեղզուեցան, սուլթանը միշտ Երլտըզ կը դառնայ արե-  
ւուն մարը մանեղէն առաջ:

«Երէկ, նորէն, սուլթանը ձովու ճամբով Ստամպուլ  
գնաց, Տոլմա—Պաղչէի պալատին առջեւէն շոգենաւ նըս-  
տելով: Թէպէտ իշխանութիւնները զիտէին անշուշտ թէ  
սուլթանը ո՞չ ցամաքէն պիտի երթար եւ ո՞չ ալ ցամաքէն  
ետ դառնար, և սակայն անոր անցքին համար մէկ քա-  
նի ճամբայ պատրաստելու կատակերգութիւնը նորէն ի  
գործ դրուեցաւ: Պէշիքթաշէն Ստամպուլ տանող ճամբան  
դրոշազարդուած էր եւ աւազով ցանուած, մինչդեռ եր-  
կու կողմը զօրք շարուած էր: Հազարաւոր ժողովուրդ,  
այս պատրաստութիւններէն խաբուած, ժամերով սպա-  
սեցին, տեղատարափ անձրեւին տակ, իրենց վեհապե-  
տին անցնիլը տեսնելու յոյսով: Իրենց սպասումը ի դե-  
րե ելաւ, որովհետեւ սուլթանը շոգենաւով վերադարձաւ  
Տոլմա—Պաղչէ: Ոստիկանական ու զինուորական սովո-  
րական զգուշութիւնները ձեռք առնուած էին երէկ՝ ու և է  
անկարգութեան մը առաջը առնելու համար:

«Հեծելազօրքի ջոկատներ անդադար կը պտըտէին  
բոլոր թաղերը որոնցմէ կը յուսացուէր որ սուլթանը անց-  
նէր: Կամուրջը յատուկ ուշադրութեան առարկայ էր ու-  
տիկանութեան կողմէ: Ամբողջ շաբաթ մը, պահապան-  
ներ զիշեր ցորեկ կը հսկէին կամուրջին տակը՝ ու և է  
մարդու մը թող չտալու համար որ ձեռք դպցնէ անոր,  
և երէկ ժամերով նաւերուն արգիլուեցաւ կամուրջին տա-  
կէն անցել: Կայսերական թէլըրֆիլէ շոգենաւին համար,  
որով սուլթանը երէկ իր ճամբորդութիւնը ըրաւ, յատուկ  
նաւաստիներ ընտրուած էին, եւ բոլոր այդ մարդիկը՝ մե-  
ծով պղտիկով՝ իրրե սուլթանին հիւրերը Երլտըզ ֆէօշիլը  
կը բնակէին, ամէն հաղորդակցութենէ զերծ, մինչեւ ա-  
րարողութեան օրը: Սուլթանը, իր զոհութիւնը յայտնե-  
լու համար իր ձովային ճամբորդութեան կարգադրու-  
թեանցը նկատմամբ, դեր—ձովակալի աստիճանին բարձ-  
րացուց թէլըրֆիլէի նաւապետը:»

### ԼՈՒՐԵՐ

**ՍՈՒԼԹԱՆԸ ԵՒ ՌՊԱ.** Եւրոպական բերքերը ամենայն շրջաբերտը կը ծանուցանեն թէ սուրբանը որոշեր է յառաջիկայ ամրան Եւրոպա ձաւրորդութիւնն մը ընել, եւ Պերլիէնէն անցնելիս յետոյ՝ ոչ ոք պիտի երթայ փոխադարձ այցելութիւն մը տալ իր միակ բարեկամին, Բարիզի Արոշեստանանդէսը այցելել:

Եւրոպական բերքերը չեն ծանուցաներ սակայն թէ սուրբանը իրր հանդիսատէս պիտի մասնակցի ցոցահանդեսին, թէ ոչ իրր հանդիսադրեալ... վայրի գազաններու յատկացած բաժնին մէջ:

Արդեօք սուրբանը սկսած է ինքզինքը շահ տանապահով գգալ իր Եւրոպի որչին մէջ, ոչ անկից մէջ մը ինքզինքը դռնու ետեւը խորհուրդներ որո՞՞ւր ուր մտնելու վրայ է:

**ՎԱՆԻ** Եւրոպական մէջ տիրող բռնապետութիւնը այնքան սաստիկացած է որ Անգլիացի Կանանց Հայկական Եպստամատոնոյց Յանձնաժողովը, գիտնալով հանդերձ որ հիմակ անգլիական հասարակութեան բոլոր ուշադրութիւնը այդտեղ կեդրոնացած է, կը համարձակի նոր կողմը ընել ի նպաստ հայ սովետներուն: «Եթէ օգնութիւն չհասնի, կը գրէ ՏԵՐ. Բէյնոյտը Վանէն, գիշացիներուն ուրիշ բան պիտի չունայ ընելիք բայց երբ սովամահ մեռելի կամ մահմետական դառնալ, բացի երկ կարեւոր երկրէն փախչի:»

Կանանց Յանձնաժողովը կը յոշանայ որ գոնէ այնչափ նպաստ պիտի ստանայ որ կարեւոր բաց պատէջ ՏԵՐ. Բէյնոյտը որքանոց որ 500 տղաք կը պատուարուի, և շարունակել իր արհեստանոցները միեւնէ յառ չի կայ հոշնաքը:

**ՅՈՅՆ ՄԱՄՈՒԼԸ ԵՒ ՆՈՐ ԿԵԱՆՔ.** Պ. Միւրան Մովսէսեան, «Հայաստան» ի նախկին տաղանդաւոր խրատագիրը, իրեն այժմ հաճելի ժամանակ մը ըրած է արդի հայ գրականութիւնը ձանձնելու Յոյներուն: Այսպէս, վերջերս «Բալկանեկեսիս» քերթին մէջ հրատարակուած է բարդ մանրութիւնը տիկին Մարի Սվաճեանի «Արիւնք» վերնագրով սրտայոյց ու ներոյժ վիպակին, զոր «Նոր Կեանք» հրատարակեց 1898ի 3րդ թիւին մէջ, եւ «Այրիւնք» ի յոշնաք 1ի թիւին մէջ ալ՝ բարդ մանրութիւնը Մոտրէն Պարբերեանի հոյակապ էջին, «Պոռտ մը ընդ», հրատարակուած «Նոր Կեանք» ի 1899ի 9րդ թիւին մէջ:

**ՏԱՄԱՏ ԴԱՂՄՈՒՏ** փաշայի Եւրոպա փախչելուն հետեւանքով, Կ. Պոլսոյ մէջ հսկողութիւնը սաստկացած է, որովհետեւ կը կարծուի թէ ուրիշ բարձրաստիճան անձեր ալ անոր օրինակիս պիտի հետեւին: Ուստի անորութիւնը վերջերս յանկարծ Պոլսոյ նաւահանգստին մէջ կոխեր է ֆրանսական շոգեմաշակ մը՝ նաւագներուն մեծ մասը ձաշի համար ցամաք իջած առեւ, և սկսեալ է չորս կողմը փնտռել գտնելու համար բարձրաստիճան թիւրք մը որ հոն ապաստանած կը կարծուի. բայց բան մը չէ գտեր: Ֆրանսական դեսպանատունը իրողութիւնը

իմանալուն պէս, ծանուցագիր մը դրկեր է Դրան շրջաքելով ուստի անորութեան արարքին դէմ: Դռնար, ի պատասխանի, բողոքին իրաւացիութիւնը ձանձնալով, ըսեր է թէ ստիկա ստորագրուած պաշտօնէի մը գործն էր, որ յանդիմանութիւն լսած է իր այդ արարքին համար: Տաճիկական դիւանագիտութիւն մը որ սակայն միեւնէ հիմա կը բաշի կոր:

### ԶԱՐԴ

«ԶՈՐԴ, հանդիս բարիգեան նորաձեռնութեան.» այս անունով՝ փետրոսարի վերջերը Բարիզ հանդիս մը պիտի սկսի հրատարակել Տիկին Մարի Սվաճեան: Այս նոր քերթը պիտի տպուի ընտիր քղրով, շատ մը պատկերներով, և պիտի պարունակէ, բացի նորութիւններու յատկացում բաժնէն, գրական մաս մըն ալ: Պիտի խօսի կենցաղագիտութեան մասին, ձեռագործներու վրայ տեղեկութիւններ պիտի տայ, ՏԵՐ. Բոյոլեան բժշկական և առողջապահական հարցերով պիտի գրադի հոն, պիտի բովանդակի բարիգեան քրոնիկներ, վիպ մը, և՛ ամեն կերպով՝ Բարիզի նմանօրինակ հանդիսներուն հաւասար պիտի ըլլայ: Այսպէս զանաւոր նկարներ ալ պիտի հրատարակէ, իսկ ի սկզբան «բողոք» ներ պիտի տայ ընթերցողներուն և այն ամենայն ինչ որ կանանց աշխարհին կը վերաբերի:

Փայլուն ու յանկուցիչ հրատարակութիւն մը պիտի ըլլայ սա, եւ տարակոյս չունինք որ՝ տիկին Մարի Սվաճեանի բանխոսաց ու կարող տնօրինութեան ներքին շնորհով պիտի հասնի մեծ յաջողութեան մը:

### ԶԱՍՅԷ ՈՒ ԲԱԺՆԵԳԻՆ

**ՆՈՐ ԿԵԱՆՔԻ** վերաբերեալ նամակ ու բաժնեգին ղրկել առ

L. FRANK,  
32, CHESTERTON ROAD,  
(ENGLAND) LONDON, W.

**ՆՈՐ ԿԵԱՆՔ** կը հրատարակուի ամէն ամսու 1 ինչ և 15 ինչ: Բաժնեգինն է Եւրոպայի համար տարեկան 10 և վեցամսեայ 5 ֆրանք, Ամբրիկայի համար տարեկան 2 ու վեցամսեայ 1 տոլար:

Մեր գործակալներուն կողմէ մեզի նշանակուած այն բաժանորդները որոնք մտադիր չեն իրենց բաժանորդագրութիւնը շարունակելու, պէտք է ետ դարձնեն մեզի ներկայ տարուան առաջին երկու թիւերը որոնք իրենց ղրկուած են: Իսկ եթէ շարունակեն թերթերը ստանալ անձայն, մեր գործակալները իրաւունք պիտի ունենան իրր բաժանորդ նկատելու զիրենց և ըստ այնմ բաժնեգինը պահանջելու իրենցմէ: